



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Թելադրել բանակցային օրակարգ

Ղարաբաղյան հիմնահարցի կապակցությամբ քաղաքական շրջանակներում վերլուծություններն ու հոլովույթի դիտարկումը մեծ մասամբ սահմանափակվում են տարածաշրջան այցելելուց հետո համա-նախագահների հայտարարության վերլուծությամբ: Հայկական լրատվադաշտում Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ծավալվող քննարկումները վերջերս սահմանափակվել են միջազգային որեւէ ատյանի կամ երկրի կողմից հնչեցրած կարծիքի կամ հայտարարության մեջ քննարկում: Կարծես թե քաղաքական մտքեր արտահայտողները բուն բանակցային գործընթացի փիլիսոփայության փոխարեն ավելի կարեւորում են, թե համաձայնագրահները այս անգամ հասցեագրեցի՞ն մեղադրանքը, հավասարության նշան դրեցի՞ն, առաջ ո՞ւմ անունը տվեցին:

Միգուցե չի կարելի մեղադրել նաեւ քաղաքագետներին, քանի որ Հայաստանի արտաքին գործերի նախարարը եւս նույն ոճն է կիրառել բազմիցս՝ իր ելույթների առանցքը դարձնելով այն միտքը, որ միջազգային հանրության տեսակետը համընկնում է հայկական մոտեցումներին:

Անշուշտ կարելու է, որ միջազգային հանրության տեսակետը համահունչ լինի մեր մոտեցումներին: Սակայն դա բավարար պայման չէ բանակցությունների արդյունավետության ու հայանպաստ լուծումներ ապահովելու համար:

Կասկածից վեր է, որ բանականությամբ օժտված որեւէ անձ պատերազմը գերադասի բանակցությունների միջոցով հարցի լուծման եղանակից: Սակայն, հիմնական ելակետն այն է, թե բանակցություններում միջազգային շրջանակներում ինչ հարց է քննարկվում: Հենց դա ի նկատի ունենալով՝ Արցախը տարիներ շարունակ պնդում է բանակցություններին իր լիարժեք մասնակցության անհրաժեշտության մասին: Իսկ այդ մասնակցությունն ինքնին ապահովում է հայկական կողմի հիմնական պայմանը՝ դե ֆակտո Ղարաբաղի անկախության ճանաչումը:

Այս մասին վերջերս Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւս անդրադարձավ՝ նշելով, որ Ադրբեյջանը առաջին հերթին պետք է ճանաչի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որից հետո հնարավոր կլինի մյուս հարցերի շուրջ բանակցել:

Արցախի ժողովուրդն արդեն իսկ հանրաքվեի միջոցով արտահայտել է իր կամքը եւ Սահմանադրությամբ հաստատել, որ Արցախը անկախ պետություն է:

Վերադառնալով բանակցային գործընթացին՝ ակներեւ է, որ հատկապես 2016թ. ապրիլից հետո «սայլը տեղից չի շարժվում»: Հարկավոր են բեկումնային քայլեր: Հայկական դիվանագիտական շրջանակները եւ քաղաքական միտքը պարտավոր են գտնել հնարավոր միջոցները Արցախի անկախության հարցը առավել հիմնավոր եւ անշրջանցելի ներկայացնելու ուղղությամբ՝ չբավարարվելով միջազգային շրջանակների կողմից հնչեցվող «հայկական տեսակետներին համահունչ երանգներով հայտարարություններով»: Պետական սահմանները գծվում են նախ եւ առաջ պետականություն ունենալու իրավունքի ճանաչմամբ, իսկ ավելի հստակ՝ նկատի ունենալով պատմական իրավունքը, անվտանգության երաշխիքները եւ տնտեսական կենսունակության ապահովման հարցը: Ահա այն երեք ելակետային դրույթները, որոնք պետք է դառնան բանակցությունների օրակարգ թելադրող հենասյուները:



Մերձավոր Արեւելքում հայության ներկայությունը նպաստում է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը

Հունիսի 27-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ անցկացված Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է խիստ կարեւոր եւ ուշագրավ խնդիր՝ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձությունները եւ դրանց ազդեցությունը հայկական համայնքների վրա: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ նիստի մասնակիցներին հարցի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացրել Հայաստանի արտաքին գործերի նախարարը:

Խոսելով թեմայի շուրջ՝ ՀՀ Բյուրոյի անդամ, ՀՀ Դաշնության եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանույանը դրական է գնահատում այս հարցի քննարկումը ԱԱԽ նիստում՝ շեշտելով, որ Մերձավոր Արեւելքը շատ հեռու չէ մեր երկրից, եւ այս տարածաշրջանի կոնֆլիկտներն այս կամ այն ձևով ազդում են Հայաստանի անվտանգության վրա:

«Սա նշանակում է, որ մեր պետությունը մտահոգված է եւ զբաղվում է նաեւ մեր սփյուռքահայ հայրենակիցների հարցերով՝ անկախ նրանից, թե Հայաստանի քաղաքացիություն ունեն կամ չունեն: Մերձավոր Արեւելքը Հայաստանի համար հեռավոր վայր չէ, եթե մի կողմ թողնենք այդ շրջաններում հայերի բնակվելու հանգամանքը: Իրականում շատ մոտ վայր է: Օրինակ՝ մեր սահմանից մինչեւ Իրաք ուղիղ գծով ընդամենը 300-350 կմ է, ուստի դրական է, որ քննարկվել է: Բնականաբար չգիտեմ, թե ի վերջո ինչ եզրակացության են եկել, բայց ընդհանուր առմամբ ճիշտ քայլ է, որ մեր պետությունը զբաղվի Սփյուռքում, հատկապես այդպիսի անկայուն շրջաններում բնակվող հայերով»,- «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում նշեց Կիրո Մանույանը:

Դաշնակցական գործիչը կարծում

է՝ եթե Մերձավոր Արեւելքի իրավիճակը շատ անկայուն լինի, դա անպայման կունենա իր ազդեցությունը Հայաստանի ընդհանուր անվտանգության վրա՝ ոչ անապայմանորեն անմիջական իմաստով: «Հաշվի պիտի առնենք, որ Մերձավոր Արեւելքը ասելով՝ նաեւ կա մեր հարեւան Թուրքիան, եթե նույնիսկ հարեւանսման չի պահում իրեն: Եվ այդ իմաստով կարելու է, որպեսզի հետեւենք այդ խնդիրներին: Բնականաբար, կա նաեւ Իրանի նկատմամբ վերաբերմունք: Ուրեմն այս բոլորը մեր անմիջական շրջապատն են: Չեմ կարծում, որ Հայաստանում կա որեւէ մեկը՝ ներառյալ Ազգային անվտանգության խորհրդի անդամները, որ կարծում են, թե մենք կարող ենք մեծ ազդեցություն ունենալ այդ իրադարձությունների վրա, բայց միանշանակ է, որ զգոն պիտի լինենք, որ այդ իրադարձությունների հետեւանքները չվնասեն մեր անվտանգությանը, այս դեպքում՝ նաեւ այնտեղ բնակվող հայկական համայնքներին»:

Անդրադառնալով մասնավորապես Սիրիայի հայ համայնքի խնդրին՝ Կիրո Մանույանը հիշեցրեց, որ այս տարիների ընթացքում շատ է խոսվել սիրիահայերին տարահանելու մասին, բայց մեր զրուցակցի կարծիքով՝ դա ճիշտ մոտեցում չէ այն իմաստով, որ չի կարելի մարդկանց ստիպել դուրս գալ իրենց տներից, եթե նրանք ցանկանում են մնալ Սիրիայում: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է ստեղծել պայմաններ այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են Սիրիայից տեղափոխվել Հայաստան:

«Պարզ է, այսօր Սիրիայի համայնքի թիվն այն չէ, ինչ էր մինչեւ սիրիական տագնապի սկսելը՝ 2011 թ., բայց արդեն խոսվում է Սիրիայի հայ համայնքի վերականգման, վերականգնողական աշխատանքների մասին, որի

ուղղությամբ եւս պետությունը եւ ամբողջ հայությունը անելիք ունի աջակցելու, որովհետեւ Մերձավոր Արեւելքում հայության ներկայությունը նաեւ նպաստում է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը»:

Որոշ վերլուծաբաններ ԱԱԽ այս նիստից հետո առաջ քաշեցին մի վարկած, թե Հայաստանի ղեկավարության կողմից Մերձավորարեւելյան իրադարձությունների եւ հայկական համայնքների խնդիրների քննարկումը կարող է կապված լինել Ռուսաստանի՝ վերջերս խիստ ակնհայտ դարձած մի ձգտման հետ՝ ՀԱՊԿ անդամ պետություններին ռազմականապես մասնակից դարձնելու Սիրիայի իրադարձություններին:

Դիտարկելով հարցն այս տեսանկյունից՝ Կիրո Մանույանն ընդգծեց, որ Սիրիայի խնդիրը շատ նուրբ է այն իմաստով, որ այնտեղ կա նաեւ կրոնական բնույթի բախումների վտանգ, ուստի պետք է շատ լուրջ մտածել, թե արդյո՞ք ճիշտ կլինի, որ հայկական ուժերն ինչ-որ ձևով մասնակցեն սիրիական հակամարտությանը:

«Ես անձնապես շատ կողմնակից չեմ, որովհետեւ նայած թե ինչ դերակատարություն պիտի ունենան: Առ այսօր Հայաստանի պատկերը, այսպես ասած՝ իմիջն այնտեղ այն է, որ Հայաստանն աջակցում է սիրիացի ժողովրդին եւ ուղարկում է մարդասիրական օգնություն: Կարծում եմ, որ դա շարունակելն ավելի ճիշտ է, քան որեւէ այլ բան: Բայց իրադարձությունները կարող են փոխվել, ըստ այդմ էլ պետք է քննարկել: Սակայն այսօրվա պայմաններում, կարծում եմ, ռազմական ներկայությունն ունենալու հարցն այնքան էլ նպաստավոր չէ ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ հայության համար»,- ավելացրեց Կիրո Մանույանը:

Արամ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղարաբաղյան պայքարով մենք ձեռք բերեցինք ինքնավստահություն եւ արժանապատվություն. Զրանտ Մարգարյան



ՀՀ Ղաշնակցության Բյուրոյի ներկայացուցիչ Զրանտ Մարգարյանը հունիսի 24-ին հանդիպել է Մոսկվայի հայ ուսանողների հետ:

Ստորել ներկայացնում ենք Զրանտ Մարգարյանի ելույթից հատվածներ: Հապավված են միայն Սփյուռքի ներքին կազմակերպվածությանը վերաբերվող հատվածները:

Մենք մի ժողովուրդ ենք, մի ազգ: Եվ իբրեւ այդպիսին՝ հետաքրքրված ենք մեկս մյուսով: Մեր ազգը, մեր ժողովուրդը ամբողջ պատմության ընթացքում ունեցել են մի օրակարգ՝ միասնականության օրակարգ: Միասնական լինելու համար բավարար չէ ունենալ նույն պատմությունը, նույն մշակույթն ու նույն հույզերը. կարելի է ունենալ նույն նպատակը:

Իմ կարծիքով՝ այդ գերագույն նպատակն այն է, որ կարողանանք հայ ժողովրդի համար ապահովել անվտանգ գոյություն եւ համընդհանուր զարգացում: Այսինքն, սա է այն նպատակը, որն ի գործ է միավորել համայն հայությանը, բոլոր քաղաքական ուժերին եւ հոսանքներին:

Այս երու նպատակն ուղղակիորեն կապված է մեր հայրենիքի հետ, որովհետեւ մենք, իբրեւ աշխարհացրիվ հայություն, անվտանգ գոյություն ունենալ կա-

րող ենք միայն մեր հայրենիքում՝ բարձր կազմակերպվածության շնորհիվ: Իսկ մարդկային հասարակության մեջ ամենաբարձր կազմակերպվածությունը՝ պետականությունն է: Այն կազմակերպական դրվածքը, որ կարող է ապահովել հայ ժողովրդի համար անվտանգություն եւ համընդհանուր զարգացում՝ հայկական պետականությունն է: Թեպետ Հայաստանը փոքր է, եւ աբողջ հայության 1/3-րդ մասն է միայն ապրում Հայաստանում, բայց այդ Հայաստանը համարվում է մեր ժողովրդի առանցքը: Այդ պետականությունը համարվում է մեր հիմնական կռվանը: Հայրենիքում է միայն, որ մենք կարող ենք անվտանգ գոյություն ունենալ, շարունակականություն եւ համընդհանուր զարգացում ունենալ:

Սակայն դա չի նշանակում, որ Հայաստանից դուրս հայությունը արժեք չունի: Ո՛չ: Բայց այս իմաստով է, որ կարելիություն է ստանում ամեն ինչ: Եթե մենք չունենաինք Հայաստանը, մենք կլինեինք հայկական դժոխություն, նույնիսկ նրանք պարտավորվեցին պետականություն ստեղծել, որպեսզի հավերժացնեն իրենց ազգի գոյությունը: Թեպետ պետականությունը միջոց է, բայց անհրաժեշտ միջոց է որեւէ ազգի զարգացման եւ լինելիության համար:

Բոլորս ունենք նույն գերիսնդիրը: Հայաստանի Հանրապետությունը մեր հույզերի ու վաղվա օրվա հիմնական կռվանն է. պետք է կարողանանք լինել կազմակերպված եւ ուժեղ: Իսկ հայրենիքը այդպիսին կարող է լինել միայն այն դեպքում, երբ ժողովուրդն ու պետականությունը համախմբված են, երբ ժողովուրդը համախմբված է իր պետականության շուրջ:

Ընդհանրապես բոլոր ազգերի մեջ լինում է այնպիսի ժամանակահատված, երբ ներգազային մթնոլորտում տիրում է անարդարություն, որն արտաքին ուժերից է ուղղված դեպի տվյալ ազգը: Որպեսզի մենք ունենանք կազմակերպված պետականություն, պետք է մեր երկրում ներքին արդարություն լինի, որպեսզի ժողովուրդը կարողանա համախմբվել պետականության շուրջ: Այսօր մենք դրանից հեռու

ենք, բայց դա հուսահատվելու առիթ չի: Մենք պետք է ձգտենք մեր հողի վրա ստեղծել իրական ազգային միասնականություն: Ժողովուրդը պետք է իմանա, որ ինքն իր սեփական իրավունքների տերն է, որ հնարավորություն ունի աշխատելու եւ զարգանալու:

Ցավոք, մեր ժողովուրդը 9 դար շարունակ ազգային պետականություն չի ունեցել, եւ 9 դար մեզ մոտ համընկել է անարդարության մթնոլորտը եւ օտարի տիրապետությունը: Մենք հասկացել ենք, որ անարդարության ենք ենթարկվում, որովհետեւ օտարն է իշխում մեզ: Մեր ակնկալիքները սեփական պետականությունից շատ բարձր են, մենք ակնկալում ենք միայն արդարություն:

Մեր պետականությունը պետք է ունենա ազգային ուղեգիծ եւ ծրագիր, որպեսզի իմանանք՝ ուր ենք գնում եւ ինչի համար: Այլապես այդ պետականությունը կարող է իր ընթացքով կործանման գնալ եւ չկարողանա ապահովել հայ ժողովրդի անվտանգությունը: Պետականությունը, որ այսօր մենք ունենք, այդպես սկսեց իր կյանքը: Եթե հիշեք՝ Ղարաբաղյան պայքարի սկզբնական օրերին հարց էր դրված՝ արդյո՞ք Ղարաբաղով պետք է սկսենք մեր պայքարը, թե՞ ժողովրդավարություն հաստատելով: Իհարկե, եւ ժողովրդավարությունն ու Ղարաբաղը չեմ հակադրում իրար, բայց մենք ազգովի բնագործն ճիշտ ճանապարհն ընտրեցինք, եւ Ղարաբաղը տվեց մեզ ազգային ուղղվածություն, դարձավ ուղեգիծ մեզ համար: Ղարաբաղյան պայքարով մենք շատ կարելի է քանիստ ձեռք բերեցինք. ոչ միայն տարածք, այլ՝ ինքնավստահություն եւ արժանապատվություն ձեռք բերեցինք, որովհետեւ 9 դար հայ ժողովուրդը միայն կորուստ է ունեցել: Եթե 20-րդ դարը մենք սկսեցինք ցեղասպանությունով, 21-րդ դարն սկսեցինք հայրենիքի ազատագրումով:

Սփյուռքը, որ մեր դժբախտությունից է ստեղծվել, կարող է դառնալ ուժ, կարող է դառնալ Հայաստանի համար շարունակություն՝ եթե կազմակերպված լինի: Մնայուն կազմակերպված Սփյուռքն է, որ

կարելիություն է, ուժ է: Սփյուռքի կազմակերպվածությունը, եթե սկզբնական շրջանում մեզ համար հայապահպանման խնդիր էր, 60-ամյակից հետո այն դարձավ քաղաքական կազմակերպվածություն, որն ուղղակի դերակատարություն ունեցավ Հայաստանի համար: Դրա արդյունքում է, որ ԱՄՆ-ում այսօր ամենամեծ լոբբիստական կազմակերպությունը հրեականն է, իսկ երկրորդը՝ հայկականը: Զաղաքական կազմակերպվածությունն այսօրվա անհրաժեշտությունն է:

Հավատում եմ, որ մենք ունենք բազում խնդիրներ, մենք շատ բարդ տարածաշրջանում ենք ապրում, այսօր աշխարհի ռազմաքաղաքական մթնոլորտը գնում է դեպի քաղաքակրթությունների բախման: Մենք տարածաշրջանում բավականին խնդիրներ ունենք. մի կողմը Թուրքիան է, մյուս կողմը՝ Ադրբեջանը: Մենք 27 տարի շարունակ պատերազմի մեջ ենք գտնվում: Ադրբեջանն ունի նավթ եւ Թուրքիայի պես հզոր պետություն իր թիկունքին: Մենք չունենք այդ հնարավորությունը: 27 տարի է՝ մենք մեր ժողովրդի վրա ենք հենված, այդ պատերազմի գինը վճարում է մեր ժողովուրդը: Մենք պարտավոր ենք լինել այդ պատերազմի մեջ, որովհետեւ հասկանում ենք, որ Ղարաբաղի հարցը կենսական հարց է, գոյության համար եւ մեր զարգացման համար: Մենք ունենք նաեւ հարեւան Իրան, որը նույնպես իսլամական պետություն է, գուցե մի քիչ տարբեր, ինչ-որ իմաստով՝ նույնիսկ հակաթրքական տրամադրություններով: Ունենք Վրաստան, որը միակ քրիստոնյա հարեւանն է, թեեւ միջազգայնորեն ուրիշ քաղաքական ճամբարի մեջ է գտնվում: Ունենք Ռուսաստան՝ իբրեւ ռազմավարական դաշնակից, եւ պիտի կարողանանք ամրապնդել ու խորացնել հարաբերությունները՝ պահելով մեր գործընկերության կարգավիճակը: Բայց այդ հարաբերությունները մեզ համար կենսական անհրաժեշտություն են: Եվ դրա համար պետք է կարելիություն հայտնաբերենք: Մենք ունենք Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները, բայց ոչ թե գերադասի ու ստորադասի առաքելությամբ, այլ՝ ընկերական հարթակի վրա:

Հարցեր կառավարությանը

Հունիսի 28-ին կայացած Արցախի Հանրապետության Ազգային ժողովի լիազուրմար նիստում կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում 10 պատգամավորների կողմից հնչեցվել է 15 հարց, որոնց գերակշիռ մասը բարձրաձայնել են ԱԺ «Ղաշնակցություն» խմբակցության պատգամավորները:

Պատգամավոր Ալյոշա Գաբրիելյանը բարձրացրել է մի շարք համայնքներում ղեկավարների եւ ավագանու անդամների հետաձգված ընտրության հարցը: «Համաձայն Արցախի Հանրապետության նոր Սահմանադրության որոշ դրույթների պահանջների՝ պատկան մարմինների կողմից որոշվել է «ՏԻՄ ընտրությունների մասին», «Ընտրական օրենսգիրքը» եւ «Վարչատարածքային բաժանումների մասին» օրենքների նախագծերը քննարկման ներկայացնել 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին», - նշել է պատգամավորը եւ հավելել, որ ըստ ԿԸՀ ներկայացրած տվյալների՝ մինչեւ հիմա 64 համայնքներում համայնքների ղեկավար եւ 15 համայնքներում ավագանի չի ընտրվել, որն ընտրողի եւ ընտրվողի իրավունքի ոտնահարում է: Միաժամանակ նա հավելել է, որ այդ ամենը ենթադրում է, որ

մինչեւ 2020թ. ՏԻՄ ղեկավարների եւ ավագանու ընտրություններ ընդհանրապես չեն լինելու:

ԱՀ Արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը, պատասխանելով հարցին, նշել է, որ Սահմանադրությունը նախատեսում է, որ ՏԻՄ համակարգի հետ առնչվող օրենքները պետք է Սահմանադրությանը համապատասխանեցվեն 5 տարիների ընթացքում, ինչը չի նշանակում, որ պետք է սպասել մինչեւ ժամկետի լրանալը: «Կառավարությունում տեղի են ունեցել հարցի վերաբերյալ բազմաթիվ քննարկումներ, աշխատանքները հրապարակային չեն ընթանում եւ մինչեւ տարեվերջ խնդրո առարկա հարցի վերաբերյալ որոշակի պատկեր ձեւավորվելու է. խնդիրը պետք է շուտափույթ լուծում ստանա», - ավելացրել է Արարատ Դանիելյանը:

Պատգամավոր Լեռնիկ Հովհաննիսյանի հարցերը վերաբերում էին Զաշաթաղի շրջանին: Պատգամավորին հետաքրքրում էր, թե երբ կսկսվի Բերձորում բազմաբնակարան 2 շենքերից մեկի շինարարությունը, ինչպես նաեւ՝ կլուծվի Զաշաթաղի շրջանի բուժաշխատողների ծառայողական բնակարանով ապահովում հարցերը:

«Բերձոր քաղաքում սկսել ենք մեկ

բնակելի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները եւ նախատեսում ենք 2018թ. այն ավարտել, որից հետո անդրադառնալ երկրորդ շենքին: Պատճառը ֆինանսական միջոցների սղությունն է: Երկրորդ հարցի հետ կապված. այն կքննարկենք եւ հնարավորության սահմաններում լուծումներ կտանք», - նշել է ԱՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը:

Պատգամավոր Ռիտա Մնացականյանը բարձրաձայնել է գյուղաբնակ երիտասարդ ընտանիքներին բնակարանների վերանորոգման համար հատկացվող գումարների տրամադրումն արագացնելու հարցը: Նա նաեւ հետաքրքրվել է, թե արդյո՞ք շրջկենտրոնները, գյուղական բուժկենտրոնն ապահովված են օժերի խայթոցների դեմ համապատասխան դեղերով:

Ի պատասխան առաջին հարցի՝ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարար Սամվել Ավանեսյանը նշել է, որ գործընթացը ժամանակ է պահանջում, ծրագիրը գործում է եւ ըստ հերթականության դիմողները կֆինանսավորվեն:

Առողջապահության նախարար Կարինե Աթայանը տեղեկացրել է, որ 2017թ. ապրիլ ամսից սկսած՝ Արցա-

խում գրանցվել է օժի խայթոցի 13 դեպք, եւ բոլոր հիվանդանոցներն ապահովված են համապատասխան հակաթույններով:

Պատգամավոր Դավիթ Իշխանյանին մտահոգում է վերջին զանգի արարողությունների հետ կապված անառողջ մթնոլորտը եւ առաջարկել է այն ուշադրության կենտրոնում պահել:

«Ունենք մի քանի հրամաններ, որոնցով արգելվում են նման կարգի դրամահավաքները դպրոցում, իսկ վերջին զանգի արարողությունները ծնողների նախաձեռնությունն են: Մենք միշտ շեշտում ենք, որ ամեն ինչ պիտի կատարվի չափի սահմաններում», - նշել է ԱՀ ԿԳՍ նախարար Սլավա Ասրյանը:

Ի պատասխան պատգամավոր Վահրամ Բալայանի բարձրացրած հարցի՝ թե երբ է լուծվելու Ստեփանակերտ քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցի չբարեկարգված հատվածի վերանորոգման հարցը, ԱՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը նշել է, որ արդեն առկա են տվյալ փողոցի նախագծանախահաշվարկային փաստաթղթերը, աշխատանքներն իրականացվում են ըստ հաջորդականության:

«ԱՄՍՈՒՄ»

Ամեն ինչ կանենք, որ այդ հավատը ոչ միայն չմեռնի, այլ նաեւ արթնանա անհավատների մեջ

Հունիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց կառավարության 2017-2022 թթ. ծրագիրը:

Աժ պատգամավորների 64 կողմ, 31 դեմ ձայների հարաբերակցությամբ խորհրդարանը հավանության արժանացրեց:

Ծրագիրը հենվում է ՀՀ նախագահի ուղերձի, Հայ Յեղափոխական Դաշնակցության եւ Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրերի եւ կոալիցիոն հուշագրի սկզբունքների հիման վրա:

Ստորեւ ներկայացնում ենք ՀՀ-ի Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի եւ ՀՀ-ի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյանի տեսակետները կառավարության ծրագրի վերաբերյալ:

Արմեն Ռուստամյան

ՀՀ կառավարության ծրագրի հիմքում ընկած է ոչ թե այն, թե տվյալ պահին ով է վարչապետը կամ ովքեր են կառավարության կոնկրետ անդամները, այլ այն, ինչը հստակ արձանագրված է ծրագրի սկզբում՝ ՀՀ-ի, ՀՀ-ի նախընտրական ծրագրերը, կոալիցիոն հռչակագիրը եւ հասարակությունում շրջանառվող առաջադեմ գաղափարները: Ավելին, այն օրգանական կապի մեջ է 2016 թվականի հոկտեմբերին ներկայացված նախորդ կառավարության ծրագրի հետ: Յետեւաբար, հարց չի կարող առաջանալ, թե ինչու է ծրագիրը վերաբերում 2017-2022 թվականներին:

Մեզ համար այս ծրագրի գլխավոր առանձնահատկությունը, ինչով այս ծրագիրը շահեկանորեն տարբերվում է մյուսներից, այն է, որ կառավարությունը իր տեսլականը պատկերում է՝ ըստ էության որդեգրելով Դաշնակցության կողմից բազմիցս հիշատակված «Չարգանալ չգիշելով» դժվարին, սակայն արժանապատիվ սկզբունքը:

Կառավարության այս ծրագիրը ըստ

էության կառուցված է այն գաղափարախոսության վրա, ըստ որի՝ չնայած նրան, որ Հայաստանը դիմակայում է անվտանգության լրջագույն սպառնալիքներին եւ մարտահրավերներին, երկիրը պարտավոր է եւ կարող է զարգանալ՝ առանց զիջելու մեր ազգային ռազմավարական շահերը: Կառավարությունը փաստացի ստանձնում է հենց այսպիսի հանձնառություն եւ հայտ է ներկայացնում ապացուցել առանց մեր սերունդների ձեռք բերածը կորցնելու երկրի առաջանցիկ զարգացումն ապահովող հայեցակարգի կենսունակությունը:

Մենք ազգովի առաքելություն ունենք ապացուցելու, որ աշխարհաքաղաքական այս բարդագույն իրավիճակում իսկապես կարող ենք մեր հույսը մեր վրա դնել: Այս վստահությունն ու լավատեսությունն են ուզում հասարակությանը ներշնչել կառավարության ծրագրի հեղինակները: Սա է գլխավոր ուղերձը:

Այո՛, լինելով պատերազմական վիճակում, մենք կարող ենք ու պարտավոր ենք զարգանալ: Կառավարությունը, քաջ գիտակցելով երկրի դեպի ծով ելք չունենալու, շրջափակման մեջ լինելու ծանրագույն պայմանները, հանձնառություն է ստանձնում երաշխավորել Հայաստանի եւ Արցախի միասնական անվտանգությունը, անհրաժեշտ թափ հաղորդել մեր երկրի զարգացմանը՝ ձեռավորելով դրա համար բավարար արտաքին եւ ներքին ռեսուրս:

Ողջունելի է, որ վարչապետը ծրագիրը ներկայացրեց համադրելով կատարվածն ու անելիքը, ինչը պատասխանատու եւ հաշվետու լինելու եւ ապագա ծրագրերի նկատմամբ վստահություն ունենալու դրսևորում է:

Մեր արտաքին ռեսուրսը հմուտ դիվանագիտություն իրականացնելու, Սփյուռքի մեր ներուժը գորաշարժի բերելու միջոցով մեր արտաքին բազմակողմանի քաղաքական եւ տնտեսական կապերն ամրապնդե-

լու եւ դաշնակից ու բարեկամ երկրների շրջանակը հետեւողականորեն ընդլայնելու մեջ է: Ներքին ռեսուրսը բազմապատկելու գրավականը հայ մարդու իրավունքների եւ ազատությունների երաշխավորումն է, ներազգային համերաշխության ու արդարության ապահովումը: Դրան հասնելու համար բարենպաստ միջավայր ձեւավորելուն են կոչված ծրագրային այնպիսի առաջնահերթություններ, ինչպիսիք են հատկապես՝

- միջազգային խորհրդարանական համակարգերի առաջադեմ փորձի տեղայնացումը՝ ապահովելով պետական կառավարման, տարածքային եւ տեղական ինքնակառավարման արդիականացումն ու արդյունավետությունը, մասնավորապես կառավարություն-վարչապետ-նախարար Սահմանադրությամբ նախատեսված կարգավիճակներին համապատասխան լիազորությունների եւ պարտականությունների պատշաճ օրենսդրական կարգավորում,

- խոշորացված համայնքներում համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության մոդելի եւ համայնքների ավագանիների համամասնական ընտրական համակարգի ներդրում, ինչը նախորդ ծրագրում կար: Այստեղ, կարծում եմ, բաց է թողնվել, առաջարկում ենք վերականգնել արդարադատությունը երաշխավորող նոր անկախ եւ անչառ դատական համակարգի ձեւավորում,

- հասարակության լայն վստահությունը վայելող կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ինստիտուցիոնալ համակարգի հիմնում, ինչի համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներն արդեն կատարված են,

- բարձր որակավորում ունեցող, մրցունակ, արժանավայել ու վստահելի մարդկային կապիտալ ձեւավորելուն կոչված արդար ու թափանցիկ կադրային քաղաքականություն,

- Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի՝



որպես մեկ միասնական հայության ամբողջացում, հայության ճակատագրում բոլոր հայերի մասնակցությունն ապահովող համապատասխան իրավաքաղաքական միջավայրի ստեղծում: Ի դեպ, թե՛ մեր, թե՛ Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրերում Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից բացի կարելիորվել է նաեւ Ցեղասպանության հետեւանքների վերացման խնդիրը, ինչը բացակայում է ծրագրում: Առաջարկում ենք համապատասխան տեղում լրացնել այս բացը:

Հարգելի գործընկերներ,

Գործ անելու որեւէ մոտիվացիա ունի միայն լավատեսը, ոչ երբեք հոռետեսը: Վատատեսի մոտիվացիան՝ վատը գուշակելով սեփական վատատեսությունը արդարացնելն է: Սա լավատեսությամբ ներշնչված գործնական ծրագիր է: Մենք հավատում ենք այս լավատեսությանը: Միաժամանակ, քաջ գիտակցում ենք, որ հավատն առանց գործի մեռած է, եւ ուրեմն ամեն ինչ կանենք, որ այդ հավատը ոչ միայն չմեռնի, այլ նաեւ արթնանա անհավատների մեջ:

Վճռականության պահանջ



Աղվան Վարդանյան

Հարգելի խորհրդարան, Հարգելի կառավարություն,

Այս կառավարության նախորդ՝ կարճաժամկետ ծրագիրը բնորոշել եմ մեկ բառով՝ գործնական: Մինչեւ այսօր արվածի հիմքով վերահաստատում եմ այդ գնահատականը՝ արդեն իբրեւ այս վարչապետի ու այս կառավարության բնութագիր:

Գործնականությունը այս փուլում, թերեւս, ամենապահանջված հատկանիշն է: Երբ կատարված է հանրային կյանքի բոլոր ոլորտների պիտանալումը, երբ համատեղ ուժերով ձեւակերպված են երկրի առջեւ ծառացած ներքին ու արտաքին դժվարագույն մարտահրավերները, երբ նախանշված է ուժեղ, մրցունակ, ազատ պետություն դառնալու նպատակը, ամենօրյա գործնական աշխատանքը այլընտրանք չունի:

Ներկայացվող ծրագիրը, անկախ տարբեր կարծիքներից, հարկ եղածից ավելի մանրակրկիտ է՝ ոլորտ առ ոլորտ, հստակ, չափելի, կոնկրետ պատասխանատվու-

թյուն ենթադրող ժամանակացույց-անելիքներով: Զաղաքացին, քաղաքական ուժերը ցանկության դեպքում կարող են հետեւել ժամանակացույցին եւ արածի ու չարածի հաշվետվություն պահանջել:

Ծրագրի առանցքը լայնամասշտաբ բարեփոխումներն են, որոնք մեր բառապաշարով պետք է լինեն արմատական ու որակական:

Երկրի իրավիճակից մեկնելով՝ արմատական բարեփոխումները հանրության որոշ շերտերի համար կարող են նաեւ ցավոտ լինել: Այս առումով չափազանց կարեւոր է, որ ծրագրի նշանային՝ «բարձրացնել եւ ամրապնդել արդարության ու վստահության մթնոլորտը մեր հասարակությունում» արտահայտությունը կյանքի կոչելու տեսանելի քայլեր կատարվեն:

Եթե կառավարությունը կարողացավ հանրության գոնե մի մասի մոտ կոնկրետ արդյունքներով լավատեսություն, վաղվա հանդեպ հավատ ներշնչել, հասարակության առողջ հատվածը կմասնակցի բարեփոխումներին: Առանց այդպիսի մասնակցության, առանց հետադարձ կապի ապահովման, ցանկացած՝ նույնիսկ լավագույն ծրագիր դատապարտված է:

Խոսքի եւ գործի հակասության ամենափոքր դրսևորումը, ինչը գրեթե միշտ բնորոշ է եղել մեր իրականությանը, քաղաքացին արձանագրում է ու պետության, իշխանության հանդեպ վերաբերմունք ճշտում, բացասական վերաբերմունք՝ բոլոր հետեւանքներով: Կառավարությունից պահանջում եմ՝ հատուկ ուշադրություն դարձնել այս հանգամանքին:

Ասում եք՝ կոռուպցիայի, մենաշնորհների դեմ պայքարելու եք, պետք է գործնական քայլերով ապացուցեք: Ասում եք՝ արտոնյալներ, հովանավորյալներ չեն լինելու,

ասում եք՝ հավասար մրցակցային պայմաններ եք ապահովելու, օրենքը տարածվելու է բոլորի վրա, հարկային-մաքսային մարմինները անկողմնակալ են լինելու, իրավապահները ծառայելու են ոչ թե իշխանությանը, այլ՝ քաղաքացուն. դարձյալ պետք է գործնականում ապացուցեք: Շուրհերը, խարդավանքները, մամուլով ներշնչական շանտաժները վիճակ չեն փոխելու:

Կոնկրետ մարդը պետք է տեսնի իր հանդեպ պետական մարմինների, պաշտոնյաների վերաբերմունքի էական տարբերություն: Հանրային ծառայողի նոր վարքական է պետք պարտադրել, նոր մոտեցումներից բխող կադրային քաղաքականությամբ: Ապրիլյան օրերից հետո ստել եմ՝ այսպիսի ժողովուրդը այլ վերաբերմունքի է արժանի:

Առարկայական, բովանդակային քննարկումից խուսափողներ միշտ են լինելու: Բայց ե՛ւ նրանց, ե՛ւ հանրության համար հարկ եմ համարում ծրագրից մեքերել մի քանի բանալի արտահայտություններ՝ «հասարակությունում շրջանառվող առաջադեմ գաղափարներ», «անվտանգ, արդար, ազատ, խելացի Հայաստան», «կիրթ, մոտիվացված, շարժունակ աշխատուժ», «ներքին ռեսուրսների արդյունավետ եւ խելացի օգտագործում», «Հայաստանի թվային օրակարգ», «Սփյուռքահայության եւ Հայրենիքի ամուր կապի ստեղծման բանաձե», «ազգ-բանակ», «արտահանումը՝ 40-45 տոկոս», «կապիտալ ծախսերի աստիճանական ավելացում», «արտաքին պարտքի կայունություն», «հարկեր-ՀՆԱ հարաբերակցության 2,5 տոկոս աճ», «տարեկան 3 միլիոն զբոսաշրջիկ», «պարենի ինքնաբավությունը՝ մինչեւ 75 տոկոս», «ուսուցիչների վարձատրություն, խրախուսման նոր մեխանիզմներ», «բազմազանական ընտանիքների աջակցություն նոր օրենք»:

Այս ամենի հիմքում, տեղյակ ենք, նախապատրաստված ծրագրեր կան: Բայց դրանք կյանքի կոչելու համար այս կառավարությանը, այս վարչապետին ամենից ավելի վճռականություն է անհրաժեշտ: Սկսած մինչեւ վերջ տանելու, ոչնչի առջեւ կանգ չառնելու վճռականություն:

Նախկինում մենք կառավարության ավելի հավակնոտ ծրագիր էլ ենք ունեցել: Բայց այն, կարծում եմ, ծախողվել է ոչ միայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, այլեւ անվճռականության ու հարմարվողականության պատճառով:

Գործով, առանց աշուձախ նայելու առաջ գնալը, համոզված եմ, այլընտրանք չունի: Այդ դեպքում՝ ա՛յս կառավարությունը կշարունակի վայելել Դաշնակցության ամբողջական աջակցությունը:

Հիմա էլ խանգարողներ լինելու են, անցյալի անցքերից մտնել փորձողներ լինելու են, քաղաքական կյանքի սեւ խոռոչը ինքնաբավարարմամբ հինգ տարում էլ նոր բան չի ծնելու: 2018-ի քաղաքական կեղծ օրակարգը թեժացնողներ լինելու են:

Ներքեցք, որ հարցնում եմ, բայց ձեզ համար ի՞նչ տարբերություն, թե ով է լինելու վարչապետ: Ձեր մոտեցումները դրանից փոխվելո՞ւ են: Արտակ Չեխայանը սոցիալիստ-պահպանողակա՞ն է դառնալու: Ինն ամիս համբերեք, հարցեր չեն մնա:

Հարգելի գործընկերներ,

Սա մեր կառավարությունն է, մեր ծրագիրն է, եւ մենք հետեւողականորեն գնալու ենք երկիրը արմատական, որակական փոփոխությունների տանող ճանապարհով:

Իմ համոզմամբ՝ նոր սկիզբը դրված է: Մնում է՝ աշխատանքով քայլ առ քայլ Հայաստանը դարձնել արդար, անվտանգ, զարգացող պետություն:

Չուտ հայկական պետություն:

«Դանդաղ գործողության ական» Ադրբեջանի նախագահի առանձնատանը. որքա՞ն իրական է



Պարզվում է, որ իրական է: Եվ կամ մոտ է իրականությանը: Համենայնդեպ, երեւոյթն այդպէս են ներկայացնում ադրբեջանական ընդդիմադիր լրատվամիջոցները՝ մատնանշելով այդ գործողության (ընտրողները թողնում են մասնագետներին) հեղինակին՝ Ադրբեջանի այլեւս լուծարված ազգային անվտանգության նախարարության վերջին ղեկավարին՝ գեներալ-գնդապետ Էլդար Մահմուդովին: Նրան, ում այդ բարձր ու պատասխանատու պաշտոնում դեռեւս 2004թ. հուլիսին նշանակել է անձամբ նախագահ Իլհամ Ալիեւը՝ տեղափոխելով ներքին գործերի նախարարության աշխատակազմից, եւ ավելի քան տասնմեկ տարի անց՝ 2015-ի հոկտեմբերին, երբեմնի ընկերոջը, գործակցին ու բաժակակցին անսպասելի ազատել զբաղեցրած պաշտոնից: Միաժամանակ, նախագահի այլ հրամանագրով կառավարության կազմի մեջ մտնող այդ գերատեսչությունը՝ վերակազմավորվել է Ազգային անվտանգության ծառայության: Թե ինչո՞ւ ադրբեջանական պաշտոնական կամ իշխանամետ լրատվամիջոցները միաբերան նշում են, որ Մահմուդովի օրոք նախարարությունը վերածվել էր ավազակային խմբավորման՝ երկար տարիներ շարունակ անպատիժ կատարելով բազմաթիվ ծանր հանցագործություններ՝ խոշոր չափերի շորթումներ, կաշառակերություն, պետական եւ մասնավոր գույքի բռնազավթումներ, միլիարդների հասնող բյուջետային եւ բանկային միջոցների յուրացումներ, մարդկանց առեւանգումներ, ահաբեկչություն, սպանություններ, կողոպուտներ, թմրանյութերի վաճառք եւ այլն:

Ինչ վերաբերում է անձամբ շնորհագուրկ նախարարի եւ նրա մեղսակիցների ճակատագրին, ովքեր նույնպէս բարձրաստիճան անձինք են, ապա, ինչպէս հայտնում են նույն այդ լրատվամիջոցները, Մահմուդովի նկատմամբ ադրբեջանական դատարանի որոշմամբ սահմանվել է տնային, իսկ մյուսների նկատմամբ՝ պարբերաբար երկարաձգվող կալանք: Ներկայումս այս վերջինների՝ Ալիֆ Չովդարովի, Սուբահիր Գուրբանովի, Թեյմուր Գուլիեւի, ազգային անվտանգության մյուս գեներալների ու գնդապետների քրեական գործերը, հանձնված լինելով դատական վարույթի, ահա ամիսներ ի վեր քննվում են Բաքվի միեւնոյն՝ Սաբունջիի շրջանային դատարանում:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ «Կովկասի գերուհին» խորհրդային սիրված կինոնկարի հերոսներից մեկի «Վախկոտի» արտահայտությամբ ասած, «աշխարհի ամենամարդասեր դատարանը», որպիսին ինքնաթմբկահարում է ադրբեջանական արդարադատությունը, նման անարդար խտրականություն է դրսեւորում՝ ավագակախմբի պարագլխին թույլ տալով շարունակել կյանքը սեփական առանձնատան շքեղ պայմաններում, իսկ հանցակիցներին

րին նետելով բանտային ճաղերի ետեւ:

Հարցի առաջին պատասխանը, որքան էլ տարօրինակ թվա, ամենից շուտ բարձրաձայնել է անձամբ ինքը՝ տնային կալանքի ենթարկված Էլդար Մահմուդովը, պաշտոնագրկումից անմիջապէս հետո հայտարարելով, որ եթե իրեն քրեական պատասխանատվության ենթարկեն, այսինքն՝ դատեն ու ճաղերի ետեւ գցեն, ապա ինքը գիտե, թե իր գաղտնարաններից ինչ աղմկահարույց փաստաթղթեր կնետի հանրային հարթակ: Ընդ որում, նա հասկացրել է, որ անգամ իր սպանության դեպքում փաստաթղթերը դուրս կսպորդեն ապահով թաքստոցներից ու կդառնան ոչ միայն ադրբեջանական, այլեւ միջազգային հանրության սեփականություն: Թե առհասարակ ինչ է, մասնավորապէս, կոնկրետ ում համար ի՞նչ վտանգ է թաքնված այդ սպառնալիքի տակ, նա, իհարկէ, խոհեմաբար չբացահայտեց, ըստ երեւոյթին՝ ելակետ ընտրելով «Խելքին մեկ ասա, հիմարին՝ հազար ու մեկ» ասացվածքը:

Թե ինչ ական է պարունակում Էլդար Մահմուդովի սպառնալիքը՝ այդ մասին վերջերս թեթեւակի ակնարկել են Եվրոպայում գործող ադրբեջանալեզու ընդդիմադիր լրատվամիջոցները: Ոչ, իհարկէ, Ադրբեջանի իշխանություններին ինչ-ինչ ծառայություն մատուցելու եւ այդպիսով իսկ նրանց հաճոյանալու ցանկությամբ: Մասնավորապէս, Միացյալ Նահանգներում որպէս վտարանդի ապաստանած ադրբեջանցի լրագրող Բեյրուլլա Մանաֆովը, ով թեմանիկ մեկնաբանություններով պարբերաբար հանդես է գալիս «Ազերբայջան սասի» («Ադրբեջանի ծայն»), «Թուրան» եւ համացանցային այլ հեռուստակայանների ալիքներով, անդրադառնալով հարցին, օրերս նուրբ հումորով, բայց միանգամայն հասցեական ակնարկել է, թէ Էլդար Մահմուդովը, լինելով փորձառու չեկիստ, միջոցներ չի խնայել արտասահմանյան ֆիրմաներից ձեռք բերելու թանկարժեք գաղտնի տեսաձայնագրման սարքեր, որոնք տեղը տեղին սարել է Իլհամ Ալիեւի առանձնատանը՝ բոլոր մանրամասներով արձանագրելով նախագահի ոչ այնքան ակնահաճո առօրյան՝ գինարբուքի, թմրանյութերի օգտագործման, խաղամոլության, անգամ միասեռ սիրախաղերի տեսարաններով:

Որ Իլհամ Ալիեւը դեռ երիտասարդ տարիքից գինարբուքների սիրահար է, թմրամոլ ու խաղամոլ, իհարկէ, ամենեւին գաղտնիք չէ Ադրբեջանում եւ նրա սահմաններից դուրս: Որպէս ապացույց՝ ահա մի ցայտուն գրավոր վկայություն, որ մահից հետո թողել է նրա հարազատ հորեղբայրը՝ ակադեմիկոս Ջալալ Ալիեւը: Հանգուցյալ ակադեմիկոսի այդ գրությունը «Ազերեվրոթայմաթ-Վ» կայքէջի խմբագրության է փոխանցել նրա թիկնապահներից մեկը: Հորեղբայրը, մասնավորապէս, պատմում է թուրքական խաղատներից մեկում իր զարմիկի գործած «հերոսությունների» մասին: Մեջբերում եմ. «Երիտասարդ տարիներին տարվելով հերոսով եւ մոլախաղերով՝ Իլհամ Ալիեւը դեռեւս չի կարողանում ազատվել այդ վատ սովորությունից: Նրան միայն խաղատները եւ թմրանյութերն են հետաքրքրում»: Ջալալ Ալիեւն այնուհետեւ գրել է, որ մի անգամ իր զարմիկն անչափ մեծ գումար է տանուլ տվել խաղատներից մեկում, որը պատկանում էր «խաղատների արքա» մականունով հայտնի, հետագայում Յեյդար Ալիեւի կարգադրությամբ գնդակահարված Լյուրֆի Թուֆալին: Նա պատմում է, թե քանի որ Իլհամ Ալիեւի մոտ փող չի եղել եւ, ընդ որում, խուսա-

փում էր պարտքը վերադարձնել, խաղատան թիկնապահները ծեծում ու պատանդ են վերցնում նրան: Այդ մասին տեղյակ են պահում Յեյդար Ալիեւին, որը խոստանում է վճարել գումարը: Փողերը խաղատուն են հասնում վեց ժամ հետո: Այդ ժամերին պահակային ծառայության աշխատակիցներն Իլհամ Ալիեւին ստիպում են վճարել խաղատան հատակը եւ անգամ գուգարանը: Եվ միայն այն բանից հետո, երբ հայրը վճարում է պարտքը, ազատ են արձակում նրա որդուն՝ Ադրբեջանի ապագա նախագահին: Ի լրումն նշեմ նաեւ, որ այլ աղբյուրների համաձայն դեպքը տեղի է ունեցել Ստամբուլի խաղատներից մեկում, եւ Յեյդար Ալիեւի խնդրանքով նրա որդու՝ Միլիոնների հասնող պարտքն իր, թե ում գրպակից խաղատան տիրոջն էր վճարել այն ժամանակ Ստամբուլի քաղաքապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ Թուրքիայի ներկայիս նախագահը: Ինչպէս ասում են՝ ձեռքը ձեռք է վճարում: Բայց պարտքը մնում է պարտք, եւ այն ի վերջո վերադարձնել է պետք, թե ինչպէս եւ ինչ ձեւով, արդեն կողմերի պայմանավորվածությունից է կախված: Հիմք ընդունելով Բեյրուլլա Մանաֆովի ակնարկը, ի լրումն նաեւ հանգուցյալ ակադեմիկոսի վկայությունն Իլհամ Ալիեւի հոռի սովորությունների մասին, կարելի է ենթադրել, թե ինչպէս է այն վերադարձվում: Կարծում եմ՝ բավական է համացանցում բացել Ալիեւ Էրդողան հաճախակի հանդիպումներն արտացոլող լուսանկարների հոծ շարքը, առանձնապէս դիտել նրանք, որոնցում արական սեռի երկու նախագահներն իրար են նայում արտառոց շողով հայացքներով, ապա, թեկուզ էւ արգահատանքով, կարելի է պատկերացնել, թե ինչպէս:

Ի դեպ, քանի որ խոսք բացվեց Ջալալ Ալիեւի գրության մասին, ուստի եւս մեկ փոքր անդրադարձ այդ գրավոր վկայությանը, որտեղ նույն կերպ, թեկուզ եւ ավելի մեծ նողկանքով է նա խոսում Ադրբեջանի առաջին տիկնոջ՝ երկրի ներկայիս առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիեւայի մասին: Մեջբերում եմ. «Այս անամոթը՝ զմեհիկ Մեհրիբանը, իշխում է ամբողջ Ադրբեջանում: Նա իր ձեռքում է հավաքել Ադրբեջանի ողջ հարստությունը: Ինչքան էլ որ վերցնի այդ վիուկը՝ չի կշտանում ոչ փողից, ոչ նավթից, ոչ էլ ոսկուց: Անձամբ են գիտել Ադրբեջանում 17 տղամարդու, որոնց հետ այդ փչացած սիրային կյանք է ապրել»:

Շարունակեց հետեւել Ջալալ Ալիեւի գրությանը: Նրա տեղեկատվությամբ՝ Մեհրիբան Ալիեւան չորս տարի շարունակ՝ 1991-1995թթ., ապրել է Թուրքիայում, որտեղ նրան իր խնամակալության տակ վերցրած պահել է Ադրբեջանի օլիգարխներից մեկը՝ «ԱԶԱԼ» (Ադրբեջանի օդային ուղիներ) խոշոր ընկերության ներկայիս նախագահ Ջհանգիր Ասկերովը: Ընդ որում, չնայած թուրքական թերթերը գրել են նրա այդ տարիների կյանքի մասին, սակայն ադրբեջանական ոչ մի պարբերական երբեւէ չի անդրադարձել դրան, քանզի, ինչպէս նախագահի հորեղբայրն է վկայում, Մեհրիբան Ալիեւան լրատվամիջոցներին խստիվ արգելել էր որեւէ անդրադարձ իր թուրքական կյանքին: «Եթե դուք ուշադրություն դարձնեք, գրել է հանգուցյալ ակադեմիկոսը, - ապա կտեսնեք, որ Մեհրիբանը մինչեւ 1995թ. ոչ մի լուսանկար չունի, իսկ ընդհանուր առմամբ՝ անգամ մեկ համատեղ լուսանկար Իլհամի հետ»:

Ինչ վերաբերում է նրան, թե արդյո՞ք Իլհամ Ալիեւը տեղյակ է կնոջ անբարո առօրյային, ապա Ջալալ Ալիեւի գրությունից պարզվում է, որ՝ այո: Ահա թե ինչ է նա գրում. «Անամոթ Իլհամը, իմանալով, որ Ադրբեջանում շատերը, այդ թվում իր շրջապատից, ինտիմ կապի մեջ են իր

կնոջ՝ Մեհրիբանի հետ, միեւնոյն է՝ ամեն օր բարեւ է տալիս այդ մարդկանց՝ անգամ սեղմելով նրանց ձեռքը: Նրա համար բացարձակապէս միեւնոյն է, թե որտեղ է անառակություն անում իր կինը, միայն թե հերոսն լինի»: Ավ այդ խաղամոլին դուք համարում եք ձեր նախագահը, - դիմելով իր հայրենակիցներին, հարցնում է Ջալալ Ալիեւը:

Կարող եք հարցնել՝ լավ, իսկ ինչո՞ւ Ադրբեջանի նախագահի հարազատ հորեղբայրն այդ ոճով ու բնութագրումներով է խոսում զարմիկի ու նրա կնոջ մասին: Հայտնի է, որ Ջալալ Ալիեւը նախագահ եղբոր՝ Յեյդար Ալիեւի մահից հետո կտրականապէս դեմ էր, որպէսզի նրա միևնուճար որդին զբաղեցնի պետության ղեկավարի բազկաթոռը: «Խաղամոլ եւ հարբեցող Իլհամ Ալիեւ, որը չունի ոչ քաղաքական կրթություն, ոչ համապատասխան ունակություններ, օրեցօր երկիրը ճահճի է վերածում: Նա Ադրբեջանը եւ նրա ժողովրդին իբրեւ խաղադուրյոք է դրել, որը վաղուց է տանուլ տվել Վլադիմիր Պուտինին: Ադրբեջանը երկիր է, որ հարբեցողը տանուլ է տվել», - նշել է նա: Պատահական չէ, որ, ինչպէս ինքն է հայտնում խնդրո առարկա գրության մեջ, երեք տարի շարունակ իրեն, որպէս բանտարկյալի, տնային կալանքի տակ են պահել Բաքվի Պատամուր արվարձանի իր առանձնատան մեջ՝ մշտապէս անհադորդ մնալով իրեն ընդունելու եւ ականջ դնելու իր բոլոր խնդրանքներին: Ի լրումն նշեմ, որ նախագահ Իլհամ Ալիեւը ճոխ հուղարկավորում է կազմակերպել իր այդ անհաշտ ու ըմբոստ հորեղբոր համար՝ հողին հանձնելով պատվավոր թաղումների թիվ 1 ծառուղում, նրա հարազատ եղբոր՝ Ազիլ Ալիեւի կողքին: Ինչ խոսք, իշխող տոհմի պատվի եւ արժանապատվության պահպանման հարց էր:

Վերադառնանք Բեյրուլլա Մանաֆովի մեկնաբանությանը: Իհարկէ, նրա ակնարկներից դժվար չէ կռահել, որ Ադրբեջանի, իր իսկ արտահայտությամբ, «գումարաբազ», ասել է թե՛ խաղամոլ նախագահի այդ զվարճալիքները ոչ միայն իրականացվել, այլեւ տեսաձայնների գնելի վրա ֆիքսվել են առաջին հերթին Ադրբեջանի ազգային անվտանգության նախկին ղեկավարի օժանդակությամբ: Ավելին՝ վերջինիս քաջ հայտնի են ալիեւների ընտանիքի անդամների տասնյակ միլիարդների հասնող ֆինանսական հաշիվներն արտերկրի բանկային կառույցներում, տասնյակ օֆշորային գործարքները, աշխարհի 33 երկրում ձեռք բերած 48 շքեղ առանձնատների արժեքներն ու հասցեները, չհաշված Ադրբեջանի տարածքում առկա անթիվ-անհամար շինություններն ու արտադրությունները:

Այնպէս որ, նրանք, ովքեր անմիջապէս գլխի ընկան, թե ինչ վտանգի մասին է հնչած սպառնալիքը, ստիպված եղան առայժմ բավարարվել նախկին նախարարի նկատմամբ միայն տնային կալանքի վճռով: Բնականաբար՝ առայժմ: Մինչեւ պղտոր ջրերը կպարզվեն: Այսինքն՝ մինչեւ որ կկարողանան ի հայտ բերել Մահմուդովի հոգեպահուստ թաքստոցները: Բայց, որ ծայրաստիճան դժվար է խնդիրն իրագործել, նկատի առնելով նախկին նախարարի չեկիստական հմտությունն ու փորձառությունը, Էն գլխից պարզից էլ պարզ է բոլորի, այդ թվում, առաջին հերթին, սպառնալիքի գլխավոր հասցեատիրոջ՝ պետության ղեկավար Իլհամ Ալիեւի համար: Թե երբ կպայթի դանդաղ գործողության այդ ականը՝ չշտապեք ժամկետներ կռահել: Իսկ որ գործում է այդ դավադիր ականը՝ դատելով նրա լարված ժամացույցի լսելի չխկնկոցից, աներկբա է:

Սիդայել ՀԱՋՅԱՆ
քաղաքական վերլուծաբան

Թշնամու նետած մահակը պիտի վերածել բումերանգի



Գիշեցի Յուրի Գրիգորյանն իր մասնակցությունը Արցախյան շարժմանը այսպես է բնորոշում՝ մասնակցել եմ սկզբնավորմանը, հաջող ընթացքին եւ ավարտին: «Թշնամին մեզ մոտեցավ թուրքական եղանակով, որպեսզի գողանա այս երկրամասի ժողովրդի պատմությունը: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ եթե գողանաս, կվերանա: Չկա պատմություն, չկա ժողովուրդ,- ասում է Յուրին ու ավելացնում,- Եթե թշնամին մահակ է նետում, այդ մահակը պիտի վերածես բումերանգի, ինչ հարվածով ինքն ուզում է հարվածել, բումերանգն էլ կրկնակի հարվածով իրեն պիտի վնասի»: Արցախյան շարժման ընթացքի մեջ մտել է 1987թ. կեսերին՝ ստորագրահավաքի ժամանակ, եղել է շարժման ակունքներում:

Մայր Հայաստանին միանալու համար հավաքված 90.000 ստորագրությունները (90.000-ը այն ժամանակ Ղարաբաղի չափահաս հայ բնակչության թիվն էր) եւ Հռչակագիրը 1987թ. դեկտեմբերին Մոսկվա տանողներից մեկն էր: «Մի քանի հանդիպումներ ենք ունեցել Մի-նիստների խորհրդի ազգային հարցերով զբաղվողների հետ, շատ անվանի հայ մտավորականների հետ. իմ մեջ մարմնավորվել է մի եզակի հայ անհատ՝ ակադեմիկոս, քիմիկոս Գեորգյանը, ով 80-ն անց էր արդեն եւ երկար տարիներ գլխավորել է ողջ հորհրդային Միության քիմիական արդյունաբերության միավորումը: Տպավորվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Պյոտր Դեմի-չեւի հետ հանդիպումը, ով ասել է, որ ոչ անտիսովետիզմ, ոչ էլ նացիոնալիզմ չի

տեսնում Արցախի հարցում. դա մի ամբողջ ժողովրդի որոշում է», - հիշում է Յուրին:

Մոսկվայից վերադառնալուց հետո հասարակական ժողովների սկիզբն են դրել: «Հունվարի 26-ին մեր գյուղում ընդհանուր հասարակական ժողով է կայացել՝ Մայր Հայաստանին վերամիավորվելու կապակցությամբ: Այնուհետեւ գաղտնի հանդիպում է եղել գյուղից ներքեւ Իգոր Մուրադյանի, Վաչե Սարուխանյանի, եւս մեկ հոգու հետ: Ու գործընթացը սկսվել է. ոնց որ լուցկին վառես ու չոր խոտը նետես», - նշում է Յուրին: Փետրվարի 11-ին արդեջանական մի պաշտոնային այցի կապակցությամբ ողջ շրջանի ժողովուրդը հավաքվել է Մարտունի, բայց պաշտոնյան չի եկել: Ինքն է ելույթ ունեցել, որպես պատվիրակության անդամ ներկայացրել Մոսկվայում կայացած հանդիպումները, կոչով դիմել ժողովրդին՝ շարժվելու դեպի կառավարության շենք: Փետրվարի 11-ի երեկոյան Մայր Հայաստանին միանալու Հռչակագիրը կնիքով հաստատվում է: Հավաքվել էր Մարտունու շրջանի չափահաս բնակչության թվի չափով ստորագրություն: Փաստաթղթերը հավաքում եւ ակտիվիստներից մեկի միջոցով ուղարկվում են Երեւան: «Շղթայական ռեակցիան ընդգրկում է բոլոր շրջանները՝ բացի Հաղորդից, որովհետեւ այնտեղի առաջին, երկրորդ, երրորդ քարտուղարները տեղում չէին: Այս ամենի կենդանի փաստաթուղթը եւս եմ», - ավելացնում է Շարժման ակտիվիստը: Հաղորդում Հռչակագիրը ստորագրվում է փետրվարի 12-ին, իսկ փետրվարի 13-ին ժողովուրդը մտնում է Ստեփանակերտի հրապարակը: «Ստացվում է՝ պարիսպները գրավեցինք, միջնաբերդը մնաց», - ավելացնում է նա:

Փետրվարի 20-ի հայտնի նստաշրջանն էլ այսպես է բնութագրում՝ մենք մեր գողացված պատմությունը առգրավեցինք:

Մեր ազգի պատմությունը մանրակրկիտ ուսումնասիրած Յուրին գտնում է, որ ազգի համար ճակատագրական գործերին ի վիճակի են անհատները: Երբ ծագում է լինել-չլինելու հարց, անհայտությունից ի հայտ են գալիս որոշ անհատներ, կատարում են ճակատագրական գործեր, որից հետո գնում են անհայտություն. այսպես է եղել ամբողջ պատմության ընթացքում: «Չգացել եմ, որ այս հարցը հենց այնպես լուծվող

հարց չէ: Խորհրդային գաղտնի ծառայությունները ողջ մարդկային երկսեռ այլախոսակցներին գցեցին շարժման մեջ, որոնք ակունքայիններին վրա կեղտ էին շարժում: 4 մահացու հարվածների տակ դիմանալով՝ առաջ էինք տանում գործը: Առջեւից մեզ խփում էր կայսրությունը, աջ կողմից՝ Ադրբեջանի քրեական օրենսգիրքը, ձախ կողմից՝ թուրքական լկտիացած խուժանը: Ամենամահացուն, սակայն, եղել են տեղական բյուրոկրատական պատվեր կատարող տակալները. նրանք էլ հարվածել են թիկունքից, - ավելացնում է նա ու շեշտում,- բայց մեկ է՝ սատանան ինչքան սատանայություն անի, Աստծուց ավելի ուժեղ չէ, իսկ ընդհանուրի որոշումը Աստծո որոշումն էր, դրա համար էլ ստացվել է գործը»:

Մտերիմ էր Արթուր Մկրտչյանի եւ Իգոր Մուրադյանի հետ, սակայն չի ընդունել Ազգային խորհուրդ ստեղծելու նրանց առաջ քաշած գաղափարը: «Էշը վեր էշա՝ մեհետա ցեխումը մնամ: Ծիշտ այդ ձեւի մի համագումար էլ Ղարաբաղի Շոշ գյուղում էր 1920թ. հրավիրվել: Արդյունքը եղել է հայ բնակչության կոտորածը: Մեր միակ ճանապարհը ընդհատակյա բանակ ստեղծելն էր: Տեսնում էի, որ անխուսափելի է մասսայական պատերազմը: Հինչքան թինգյանունց թյասակ ինի, վնասման չի տեմնում, հինչքան թինգյանունց վնասման ինի, թյասակ չի տեմնում: Առաջարկում էի հենվել գործող մարմինների վրա, ընդհանուր ռազմականացված իշխանություն ստեղծել, ամեն ինչը դնել ռազմական ռեյտերի վրա, որպեսզի սվերած շների պկեն ժին չիլենե յետ չիկի («սվերած շները» պետական պաշտոնյաներն են)», - շարունակում է նա իր խոսքը:

Յուրի Գրիգորյանը ՀՀ Դաշնակցության շարքերը մտել է 1989թ.: «Դրանից հետո ինչ գաղափար առաջ էի քաշում, ասում էին՝ դաշնակների ծրագրերն են: Զանի որ Դաշնակցությանն այդպիսի ծրագիր չի եղել, դաշնակցականներն էլ ինձ կասկածում էին «ԿԳԲ»-ի աշխատակից լինելու մեջ: Դրա համար էլ որոշ ժամանակ անց հեռացել եմ կուսակցությունից»:

Դեմ է տարբեր կուսակցությունների, խմբավորումների առաջացմանը՝ «ինչքան բազմակուսակցություն լինի, մեր ազգային քաղաքականության անվտանգությունը մի ընդհանուր համակարգի մեջ չի կարողանալու ամփոփվել»: «Շարժումը հոսող ջուր է, եթե այն կանգ-

նեցնում ես, ճահճաջուր է դառնում, որը համաճարակ է առաջացնում: Իսկ եթե ընթացքը շարունակվում է, ինչքան էլ դանդաղ է գնում, այնքան կեղտոտում, նստվածք է տալիս, մնում է պարզ, խմելու ջուրը»:

Բացի քաղաքական աշխատանքներից՝ ակտիվորեն մասնակցել է նաեւ ռազմական գործողություններին: Կռիվ լինի՝ նորից կգնա:

Ծնվել է 1954թ. Գիշի գյուղում: Գիշու միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ցանկանում է իրավաբանական բաժին ընդունվել, բայց նյութական միջոցները չեն բավարարում: Հարազատները կատակով ասում են՝ օգնում ար յուրիստ տեմնար, տուրիստա տեմալ. ամբողջ աշխարհը շրջել է: Ստացել է ագրոնոմի մասնագիտություն, գյուղատնտեսական տեխնիկումն ավարտել է գերազանցությամբ: Ունի 4 զավակ:

Պատերազմից հետո, 2 տարի սահմանապահ ծառայության մեջ էր, 1996թ. վերջերից մինչեւ 1997թ. կեսերը: Ծանր ժամանակների էին: Նրան եւ ընկերներին հաճախ տանում էին պատժախցերը, քաջալացնում, ծեծում, աշխատավարձից զրկում: Ասում էր՝ «մեզ քաջալացրել են, չհաննամը, բա որ գնանք տեսնենք տնտեսությունները քաջալացած, ի՞նչ ենք անելու»:

Յուրիի կարծիքով՝ Արցախը պիտի ինքն իրեն ունեւիքով բավարարի, իր ներքին հարստություններն օգտագործի: 1996թ. առաջօր ուսումնասիրում է ընդերքի ջրերը, եւ ընտանիքն է պահում, եւ համարյա ամբողջ Արցախի տարածքն ուսումնասիրում: Միայն 400 ստորերկրյա ջուր է հաշվել Մոռվից մինչեւ Արաքս, որոնցից յուրաքանչյուրը վայրկյանում 30-60 Լ ջուր կարող է տալ: Հիմա «քյանքանչի» է՝ խցանված արտեզյան ջրերն է բացում:

«Հայրենասիրական ճառերով, ողորմությամբ երկիր չի պահվի, - ասում է Յուրին ու ասում՝ ինչու էր այն ժամանակ գյուղացին կանգնել,-որովհետեւ ամեն մարդ ունեւիքի 4 տարվա պաշար է ունեցել, ամենօրյա հացն ունեցել է եւ համոզված գնացել է գաղափարի ետեւից: Խորհրդային ժամանակների 140.000 տոննա խաղողի արտադրությունն այժմ դարձել է 10.000 տոննա»: Հետո էլ ավելացնում է՝ «Ես արդեն իմ գործն արել եմ, նոր սկիզբ, նոր ուղղություն է հարկավոր»:

Տաթևիկ ԱՐԱՋՍՆՅԱՆ

Խնուշինակն ու խնուշինակցին



նալ, վաղուց մահացել են: Գյուղացիները գիտեն միայն մի բան՝ այդ չարաբանությունները 100-ամյակների պատմությունն ունեն:

«Ինչպես ասում են՝ լավ է աչքդ դուրս գա, քան՝ անունը: Երեւի ինչ-որ աննշան դեպք է եղել մեր գյուղացիների հետ, որից հետո կատարվող-չկատարվող անխտիր բոլոր դեպքերը մեզ են վերագրել: Խնուշինակցիք ոչ թե միամիտ են, այլ պարզամիտ», - պարզաբանում է գյուղապետ Կամո Մուրսայանը:

Սակայն ժողովրդի մեջ տարածված խոսքերը չեն պատմում, որ Խնուշինակը Արցախի այն եզակի համայնքներից է, որտեղ արտագաղթ չկա: Հակառակը, եթե 1995 թվականին պարզում արվում էր 615 մարդ, ապա այսօր գյուղն ունի 650 բնակիչ, կա 135 տնտեսություն:

Խնուշինակում 1873 թ. բացվել է ծխական դպրոց՝ 14 աշակերտով, իսկ 1905 թ.՝

երկսեռ դպրոց՝ 56 աշակերտով: Ներկայիս դպրոցը միանգամից աչքի է ընկնում իր բարեկարգ տեսքով, որը վերանորոգվել է վերջերս: Դպրոցում սովորում է 96 աշակերտ, աշխատում՝ 29 ուսուցիչ:

Գյուղացիները արմատներով Ջուղայից են: Գյուղը սկզբում կոչվել է Իսպահանջուղ (Սպահան-Ջուղա) եւ հետագայում վերանվանվել Խնուշինակ: Ինչ-որ ժամանակաշրջան այստեղ խան է բնակվել եւ գյուղը կոչվել է Խանի շեն, Խնուշեն, Խնուշինակ:

Գյուղի հողը բերրի է եւ հարմար անասնապահության զարգացման համար: Գյուղացիների հիմնական զբաղմունքը, սակայն, խաղողագործությունն է: Գյուղացիները տարեկան միջինը 12 տոննա խաղողի բերք են ստանում: Իրացման խնդիր եւս չունեն: Բերքը հանձնում են Մարտունու գինու գործարանին եւ վաճառում հանրապետությունով մեկ:

Գյուղի ջրամատակարարումը շուրջօր-

յա է, գյուղը լրիվությամբ զագաֆիկացված է եւ էլեկտրամատակարարված: 2016 թվականի Կառավարության որոշումով սկսվել են նաեւ գյուղամիջյան ճանապարհների սալապատման աշխատանքները: Ընթացքի մեջ է գյուղի հանդիսությունների սրահի վերանորոգումը:

«Գյուղը աշխատող մարդու տեղ է, մեր գյուղացիներն էլ հող սիրող են: Հետեւաբար, աշխատասիրությունն է բնակչության թվաքանակի բարձրացման գրավականը», - ասում է գյուղապետարանի քարտուղարուհի Համեստ Ասրյանը:

Համայնքի խնդիրներից է մանկապարտեզի եւ ակումբի շենքի վերանորոգումը, որն իր մեջ ներառում է գյուղապետարանը, բուժկետը եւ փոստը:

«Մի լույս կբացվի», - վստահ է գյուղապետը, որին հրաժեշտ տալուց հետո բռնեցինք ճարտարի ճանապարհը:

Հ.Գ. Ճարտարի պատմությունը՝ շուտով:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Ժպտերես ազատամարտիկը



Հունիսի 27-ին Հայ օգնության միության Հայաստանի Շրջանային վարչությունն իրականացրեց «Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք» ծրագիրը Արցախի Տոնաշենի գործադատում (Եղնիկներ):

ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչության ֆինանսավորմամբ Վահե 1 եւ Վահե 2 պահակակետերում բացվեցին ցուցանակ-հուշատախտակներ՝ ի հիշատակ զոհված ազատամարտիկ, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչության բժշկական հանձնախմբի անդամ Վահե Բաղդասարյանի:

«Անցյալ տարի, երբ մենք այստեղ եկանք եւ ժայռի վրա տեսանք «Վահե 1» եւ «Վահե 2» գրվածքները, մեր սրտում ցավ առաջացավ, քանի որ Վահե Բաղդասարյանն ապրելով ընդամենը 21 տարի, նվիրվեց հայ ժողովրդին, Արցախյան ազատամարտին եւ իր մեծ ներդրումն ունեցավ մեր ժողովրդի ազատագրման գործում: Մենք իրավունք չունենք մոռանալու, որ մեր կողքին կային լուռ, անխոս հերոսներ, որոնց միգուցե մենք չենք տեսել եւ չենք ճանաչել, սակայն նրանց չենք մոռացել: Վահեն միշտ մեզ հետ է, նրա ժպիտը, նրա գործերն ապրում են մեր մեջ», - նշեց ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վար-

չության ատենապետուհի Դիանա Հովսեփյանը՝ շնորհակալություն հայտնելով նվիրատուներին:

Միջոցառումը մեկարկեց լուսանկարիչ, ազատամարտիկ Հակոբ Պողոսյանի «25 տարի անց» խորագիրը կրող անհատական ցուցահանդեսով, որտեղ ներկայացված էին «Եղնիկներ» 1990-ականների եւ մերօրյա հերոսների լուսանկարները:

Իրենց հայրենասիրական եւ ազգագրական երգերի կատարումներով զինվորներին մեծ ոգևորություն պարգևեցին Սկրտիչ Սկրտչյանը եւ «Մենք ենք մեր սարերը» համույթը:

Այնուհետեւ գործադարձ զինվորներին հանձնվեցին ՀՕՄ-ի կողմից 2015թ. իրականացվող «Նամակ զինվորին» ծրագրի շրջանակներում Սփյուռքի (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Հունաստան, Սիրիա, Իրան) եւ Հայաստանի (Երեւան, Զարենցավան, Հրազդան, Գլաձոր, Բերդ, Վանաձոր, Սիսիան, Շենիկ, Աշոցք, Խաչիկ) կրթօջախների սաների ձեռքով գրված 751 նամակներ՝ ուղղված մեր սահմաններն անառիկ պահող հայ զինվորներին:

Միջոցառմանը ներկա էին Վահե Բաղդասարյանի ընտանիքի անդամները, զինակից ընկերները, ՀՕՄ-ի Արցախի մեկուսի միավորի եւ Հայաստանի Շրջանային վարչության անդամներ, ՀՀ-ի Հայաստանի եւ Արցախի կառույցի ներկայացուցիչներ, հուշակոթողի ճարտարապետն ու դարբինը եւ այլ հյուրեր:

Փոխգնդապետ Հրայր Նարիմանյանը կարեւորեց «Եղնիկներ» անունով հայտնի գործադարձ դերն Արցախյան ազատամարտում: «Պարտիզանական ջոկատներից կազմավորված գործադարձ հսկայական աշխատանքներ է կատարել գործադարձ մարտունակության ապահովման բնագավառում, իր արժանի հարվածն է հասցրել ռոտիսին Արցախյան քառօրյա մարտերում», -

նշեց Հրայր Նարիմանյանը եւ վստահեցրեց, որ գործադարձ ողջ անձնակազմը ջանք ու եռանդ չի խնայի իր մարտունակության ամրապնդման եւ վերջնական հաղթանակի կերտման գործում:

Իրար մոտ միավորված էին մարտիկն ու բժիշկը: Մարտական ընկեր Կամո Հարությունյանը վիրավորվել է Վահեի կողքին, եւ նրա վերջին բառերն էին՝ տղերք վիրավոր կա: «Ես շատ ուրախ կլինեի, եթե նրա մեկ կաթիլ ոգին ներկայումս լիներ մեր բոլորի մեջ», - հավելեց մարտական ընկերը:

Ռաֆիկ Դազիկյանը ներկայացրեց Վահեի հիշատակին գրված բանաստեղծությունը, որի հիման վրա երգ է ստեղծվել:

Վահեի զոհվելու օրը նրա հետ էր նաեւ Զարգանդ Մարտիրոսյանը: «Ամբողջ գումարտակի դեմ 58 մարդ ենք եղել: Առաջին հենակետը երկար ժամանակ չէինք կարողանում վերցնել, բաց տեղից պիտի մտնեինք: Վահեն սողետող ահագին տեղ առաջ է գնացել, մտել դիրքը եւ գնդացրորդի դիմաց զոհվել», - հիշում է մարտական ընկերը՝ ավելացնելով, որ այդ օրը՝ Շահումյանի անկումից 1 տարի անց, 1993թ. հունիսի 13-ին, որոշել էին վրեժ լուծել: Թշնամուց վրեժը լուծեցին. նրանց դիակներին թիվ ու հաշիվ չկար, բայց կորցրին ընկերոջը: Վահե Բաղդասարյանն այդ օրը հայերի կողմից միակ զոհն էր: Զարգանդ Մարտիրոսյանը եւ մյուսները շեշտում են՝ եթե ուրիշ բան էլ մոռանալիք, ժպիտը չէիր մոռանա. ժպիտն անմոռանալի էր:

Մարտական ընկեր Տարոն Տոնոյանը վկայում է, որ նա հստակ գիտակցում ուներ, նրանից երբեք չէիր լսի «չգիտեմ», «երեւի» եւ նման արտահայտություններ: Եվ այդ հստակ գիտակցումով էլ գնաց դեպի անմահություն:

Վահե Սարգսի Բաղդասարյանը ծնվել է 1972թ. մայիսի 6-ին, Թալինի շրջանի (այժմ՝ Արագածոտնի մարզ) Կաքավաձոր գյու-

ղում: 1977-1984թթ. սովորել է Կաքավաձորի միջնակարգ դպրոցում: 1984թ. ուսումը շարունակել է Թալինի թիվ 2 մաթեմատիկական թեքումով միջնակարգ դպրոցում: 1988թ., դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետ: 1989-1993թթ., ուսումնառությանը զուգընթաց «Սասունցիներ» կամավորական ջոկատի, Շուշիի վաշտի եւ «Եղնիկներ» պարտիզանական ջոկատի կազմում մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջանների եւ ԼՂՀ Ասկերանի (Հասանաբաղ, Լեւոնո), Շուշիի (Լիսագոր-Շուշի), Մարտակերտի (Մարսանգի հիդրոկառույց, Հաթերք, Տոնաշեն, Ջրաբերդ), Շահումյանի (Գյուլիստան, Խարխապուտ) շրջանների եւ Շուշի-Լաչին հատվածների ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտերին, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ օգնություն ցույց տվել վիրավոր ազատամարտիկներին: Պատերազմի ընթացքում մի քանի օրով գնում էր Երեւան եւ հանձնում քննությունները: Եղբոր հետ պայմանավորվել էին, որ հերթով են գնալու ճակատ, բայց ամեն անգամ երկուսով խախտում էին պայմանը: 1992-ին հետախուզության նպատակով թափանցել է Բաքու:

Եղել է ՀՀ-ի «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ, 1993թ. անդամագրվել է ՀՀ Դաշնակցությանը: 1991-1993թթ. եղել է ՀՕՄ-ի բժշկական հանձնախմբի անդամ:

Զոհվել է 1993թ. հունիսի 13-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի մատույցներում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով եւ «Շուշիի ազատագրման համար» մեդալով: Աճյունն ամփոփված է ծննդավայր Կաքավաձորի գերեզմանատանը:

Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Արթնանում ու քնում եմ մեղքի զգացումով. Արմեն Մովսիսյան



Ճաշակ թելադրող, սիրել սովորեցնող ու ապրեցնող՝ թերեսն այսպես կարելի է բնութագրել կիթառահար Արմեն Մովսիսյանի ստեղծագործությունները, որոնք սերունդներ դաստիարակեցին: «Ապառաժ»-ը բացառիկ հարցազրույց է ունեցել հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող, բայց Հայաստանով ու Արցախով ապրող կիթառահարի հետ:

- Պարոն Մովսիսյան, ի՞նչն է թեւ տալիս Ձեր երգերին:

- Կյանքը. մարդու կյանքին բնորոշ ամեն ինչ՝ հեշտությունը, դժվարությունը, հույզերը, ցավը, ուրախությունը: Մարդ միայն հաց հանապազօրյայի մասին չէ, որ պետք է մտածի: Ամեն մարդու գլխի մեջ կա գորշ նյութ, որը երբեմն պետք է աշխատեցնել: Հենց այդ գլուխն է թեւ տալիս իմ երգերին:

- Ձեր երգերի գերակշիռ մասը սիրո մասին է: Սեր գոյություն ունի՞:

- Առանց սիրո այս մոլորակը մեզ վաղուց դուրս կհրավիրեր: Եթե մենք չսիրենք մարդ-

կություն կոչվող տեսակը, կվերջանանք:

Ես գտել եմ իմ կեսին, իմ կյանքի ընկերոջը: Հասկացել եմ նաեւ, որ կես լինելուց բացի՝ նա իմ ուղեկիցն է, իմ առաջատու, իմ քամին, որ նախ տանում է դեպի հանգրվան:

Մարդ սիրուց անպակաս պետք է հեռանա այս աշխարհից, որպեսզի հետեւից ծաղիկ ցանեն եւ ոչ թե փուշ, ասեն՝ ափսոս, լավ մարդ էր:

- Ինչո՞ւ են լացում ասողները:

- Անցած սիրուն էլ պետք է թախիծով ու ուրախությամբ հիշել, շնորհակալ լինել, որ մի եակ քեզ պարգևել է նման զգացում, որը անցած սեր է, բայց էլի քոնն է, քո ապրածն է:

- Սերը, վերջին հաշվով, շարունակական պրոցես է: Հիմա փոքրիկս արդեն փոքրիկ չէ,

ինքն էլ երեւի այդ հարցի պատասխանը գիտի՝ որ կա սեր, կա անցած եւ ներկա սեր: Ինձ համար կա նաեւ մշտական սեր, իր համար՝ դեռ չգիտեմ: Երեւի դրա համար էլ աստղերը լացում են:

- Ամռանը հնարավոր՞ է ձյուն տեղա:

- Սիրուց՝ այո /ժպտում է/:

- Ձեր երգերում առանձնահատուկ տեղ ունի Աստվածը: Ձեր աղոթքը հասնո՞ւմ է նրան:

- Տխուր բան կասեմ՝ ես աթեիստ եմ: Կարծում եմ, որ մարդը պատասխանատու է իր խղճի եւ հոգու առաջ: Կա հզոր բնություն, որում մենք ապրում ենք՝ որպես բջիշներ, բայց, բջիշ լինելով հանդերձ, մենք գիտակից տեսակ ենք՝ հասկանում ենք, որ չպետք է չարանանք, խաբենք, ստենք, շահանանք:

Պարտադիր չէ տերտերներին լսել ու հավատալ, որ Աստվածաշունչ կոչվածն է քո դասագիրքը: Խաչը մարդու մեջ պետք է լինի: Աստված ամեն մարդու մեջ է:

- Ձեր երգերից մեկում ասում եք՝ մայր հողի վրա որոշների համար տեղ չկա: Իրո՞ք այդպես եք մտածում:

- Այնքան դժվար է այդ մասին խոսել... Ցավոք սրտի, մայր հողը չի զգում, թե երբ են նոր հերոսներ ծնվում: Ես համոզված եմ, որ տղերքը իրենց հայրենիքի բարօրության համար են ելել: Այնտեղ չարություն ու փուշ ցանելու նպատակ չկար, այնտեղ երկիրը ավելի լավ, ավելի հզորը տեսնելու ցանկությունն էր: Ուրեմն, իմ խոնարումս այդ տղերքին:

Գուցե իրենց որոշումը կայացնելու եւ իրենց հետ գնալու համարձակությունը չունեի, բայց ես հարգում եմ իրենց որոշումը, խոնարհվում եմ իրենց տեսակի առաջ, խոնարհվում եմ հաց բերող տեսակի առաջ: Եթե մարդ ես՝ պետք է հարգես: Հուսամ՝ մայր հողը տեղ կանի իրենց համար: Իրենք լավ տեսակ են, երկիր սիրող տեսակ են, երկիր պահող տեսակ են:

- Կա՞ արդյոք հայկական արեւ:

- Անպայման: Այս երկինքը, այս ամենն, ինչ որ տեսնում եք, ուրիշ տեղ չկա: Մեր ծիրանը ուրիշ համ ունի, մեր օդը ուրիշ հոտ ունի: Ինձ հաճախ են ասում, որ ես խենթ եմ: Բայց ես խենթ չեմ, որովհետեւ մերը իսկապես ուրիշ է, բայց ոչ թե բառերով է ուրիշ, այլ զգացմունքով. զգում ես, որ դա սրտիդ մասնիկն է:

Ինչքան էլ որ հիմա օտարության մեջ եմ ապրում, հարցին՝ ինչպե՞ս է Ամերիկան, ասում եմ՝ ոնց որ հարեւանի տանը ապրես: Հայաստանից այն կողմ քեզ հարեւանի տանն ես զգում: Ամերիկան իմ տունը չէ: Իմ տունն այս երկիրն է:

- Արտագաղթի թեմայով երգեր կատարելով հանդերձ՝ հեռացել եք հայրենիքից: Ինչո՞ւ:

- Կյանքում կան բաներ, որոնք այդպես էլ

չսովորեցի. չսովորեցի աթոռներին նստել, ընդունարանի չսովորեցի, մեքսս ծռել չսովորեցի, հարմար մարդկանց հետ ժպտալ ու բարեւել չսովորեցի: Կիսակքված լիճակն ինձ համար անընդունելի էր, անընդունելի էր նաեւ հարմարվել իշխողի քմահաճույքին՝ քեզանից շատ ավելի փոքր ինտելեկտով իշխողի քմահաճույքին: Հասկացա, որ ես խաղից դուրս եմ:

Իմ տեսակ մարդկանց մի մասն այսօր բանտերում է, մյուս մասը՝ հարեւանների տներում: Ես այն տեսակից էի, որն ուղղակի ցուպ վերցնում, գնում է օտարություն ու ապրում անհասկանալի պանդուխտի կյանքով:


Արդեն 9 տարի է, ինչ ամեն Աստծո օր արթնանում ու քնում եմ մեղքի զգացումով: Պատահական չէ, որ ապրիլյան պատերազմական իրադարձությունների օրերին լուսանշելեայան ընկերներիս հետ ստեղծել ենք «Հայրենիքիս» բարեգործական կազմակերպությունը, որը պատերազմական իրադարձությունների օրերին եւ դրանից հետո իր աշակցությունն է ցուցաբերում Արցախին: Այդպես եմ փորձում քավել մեղքերս, որ երկրիցս հեռու եմ, որ օտարության մեջ եմ: Ես իրավունքս կորցրած հայ եմ, ճանապարհս կորցրած հայ եմ, բայց իմ երկիրը սիրող հայ եմ:

- Ե՞րբ է գալու մեր խենթության ժամը:

- Զանի 18-20 տարեկան երեխաները սահման են պահում՝ ապացուցելով, որ կարող են կռվել ու պաշտպանել մեր հողը, մեր խենթության ժամն է: Մեր խենթությունը երկիրը պահելու խենթություն է: Մնում է միայն ջրենք եւ ծաղկեցնենք այդ տեսակը: Արցախը ոտքի կանգնելու, հաղթանակի, հզորության եւ հպարտության կայարանն է:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

«Վալլեքս» խմբի ընկերությունները նշում են հիմնադրման 20-ամյակը



2017 թվականին լրանում է Հայաստանում եւ Արցախում «Վալլեքս» խմբի ընկերությունների գործունեության 20-ամյակը: Ընկերության արցախյան գործունեության, արդյունքների եւ առաջիկա ծրագրերի մասին «Ապառաժ»-ը գրուցել է «Վալլեքս» խմբի ընկերությունների հասարակության հետ կապերի եւ տեղեկատվության բաժնի պետ Թագուհի Կարապետյանի հետ:

2017թ. լրանում է «Վալլեքս» խմբի ընկերությունների հիմնադրման 20-ամյակը:

- Ինչպե՞ս կգնահատե՞ք ընկերության աշխատանքն Արցախում:

- 1987 թվականին ՌԴ-ում հիմնադրված «Վալլեքս» ընկերությունը գործունեություն էր ծավալում գունավոր մետաղների վաճառքի եւ անշարժ գույքի շուկայում: 1997 թվականին գնելով Ալավերդու պղնձածուլական գործարանի բաժնետոմսերը՝ «Վալլեքս»-ը դարձավ այդ ընկերության սեփականատեր՝ այս կերպ մուտք գործելով Հայաստան: Պղնձածուլության սեփական պաշարներն ապահովելու նպատակով 2002 թվականից ընկերությունը սկսեց Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Դրմբոնի պղնձի ստորգետնյա հանքի նախապարաստական եւ հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման աշխատանքները: Ստեղծվեց «Վալլեքս» խմբի «Բեյզ Մեթըլս» ընկերությունը: Աշխատանքներն ավարտվեցին 2003 թվականին, նույն տարում էլ սկսվեց պղնձի խտանյութի արտադրությունը: Այսպիսով, արդեն 15 տարի «Վալլեքս» խումբն իր «Բեյզ Մեթըլս» ընկերությամբ դարձել է Արցախի տն-

տեսական կյանքի անբաժանելի մասը: Ինչպես գիտեք, ընկերությունը 2016 թվականից արդեն շահագործում է Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրը, եւ Կաշենում կառուցվել է գեր-ժամանակակից հանքահարստացուցիչ ֆաբրիկա՝ օժանդակ արտադրամասերով ու ծառայություններով:

- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել 20-ամյակի առիթով:

- «Վալլեքս» խումբը Հայաստանում եւ Արցախում լինելով ոչ միայն ոլորտի, այլեւ երկու հայկական հանրապետությունների տնտեսական առաջա-

տարներից մեկը, տնտեսական ցուցանիշներից զատ մշտապես կարելորդ է ոչ միայն մեր աշխատակիցների, այլեւ ընկերության գործընկերների եւ ընդհանրապես մարդկանց կյանքի որակի բարելավումը: Այդ նպատակով մենք իրականացրել ենք հարյուրավոր ծրագրեր: Առիթը բաց չենք թողնում նաեւ մեր ընկերության համար կարեւոր իրադարձություններն ու նշանակալի հաջողությունները նշել ողջ կոլեկտիվով եւ այն վերածել տոնակատարությունների: Այսօր մեզ համար վճռական նշանակություն ունի Կաշենի լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի երկրորդ հերթի գործարկումը, ինչի արդյունքում կրկնակի ավելացել են արտադրության ծավալները՝ դրանից բխող ֆինանսատեխնիկական ցուցանիշների աճով: Արցախում կազմակերպված տոնախմբությունը մեզ համար եւս մեկ անգամ առիթ է՝ խոսելու մեր հաջողությունների մասին, մեր կորպորատիվ շքանշաններով խրախուսելու արտադրության առաջավորներին ու մեր հավատարիմ գործընկերներին: Տոնակատարություններին մասնակցեցին շուրջ 1000 հյուրեր մեր ընկերություններից, գործընկերներ Հայաստանից եւ աշխարհի տարբեր երկրներից: Տոնակատարության առաջին մասն անցկացվեց Կաշենի Նոր կոմբինատի, երկրորդը՝ «Վալլեքս Գարդեն» հյուրանոցային համալիրի տարածքում: Մասնակցեցին հայտնի կատարողներ Հայաստանից եւ Արցախից, կային բազում անակնկալներ:

- Այս տարիների ընթացքում որքա՞ն մարդու է ընկերությունն ապահովել աշ-

խատանքով:

- Անցած քսան տարիների ընթացքում «Վալլեքս» խումբը Արցախում եւ Հայաստանում ստեղծել է 3500 Նոր աշխատատեղ: Միայն Արցախում ավելի քան 1200 աշխատատեղ: Աշխատատեղերից զատ մենք կարելորդ ենք նաեւ մարդկային զարգացումը: Դուք հավանաբար տեղյակ եք, որ հենց մեր գործունեության շնորհիվ Արցախում արդեն առկա են տեխնիկական բարձրորակ մասնագետներ՝ ճարտարագետներ: Ինչու ոչ, նաեւ բարձրորակ բանվորական մասնագետներ՝ խառատներ, եռակցողներ, շինարարական տարբեր մասնագետներ: Դրա կարիքը մենք զգում էինք մեր գործունեության առաջին տարիներին եւ ստիպված հրավիրում էինք Հայաստանից: Կարող եմ ասել, որ այսօր այլեւս նման մասնագետներ Հայաստանից հրավիրելու կարիք չկա:

Հանքարդյունաբերության բնագավառում միջազգային գների տատանումներն ի՞նչ ազդեցություն են ունենում ընկերության աշխատանքների վրա:

Այո, դա իսկապես մեր խմբի ընկերությունների համար լրջագույն խնդիրներ առաջացրեց: Բանն այն է, որ թե Կաշենի եւ թե Թեղուտի հանքավայրերի շահագործման նպատակով մենք ներգրավել ենք ֆինանսական մեծ միջոցներ եւ պետք է ժամանակին վերադարձնենք այն: Խմբի ընկերություններում իրականացված աշխատանքների, ներքին ռեսուրսների կենտրոնացման շնորհիվ կարողանում ենք շարունակել աշխատանքները:

- Ի՞նչ միջոցառումներ եք ձեռնարկում բնապահպանական նորմերը պահպանելու համար:

- Թե Դրմբոնում եւ թե Կաշենում մենք մեր աշխատանքները կազմակերպել ենք բնապահպանական միջազգային նորմերին համապատասխան: Դեռ ավելին: Ելնելով այն հանգամանքից, որ Դրմբոնի հանքավայրը մենք շահագործում էինք Սարսանգի ջրամբարի հարեանությամբ, կիրառեցինք պոչեմբարների եւ կուտակային ավազանների հատակները ժամանակակից նյութերով ջրամեկուսացնելու նոր մեթոդ, ինչը ոչ միայն Հայաստանում, այլեւ տարածաշրջանի երկրներում աննախադեպ էր: Կաշենի լեռնահանքային համալիրում մենք արտադրությունն իրականացնում ենք շրջանառու փակ համակարգով:

Բացառվում է արտադրական ջրերի արտանետումը շրջակա միջավայր: Իրականացնում ենք հանքավայրի պոչանքային կուտակումների ռեկուլտիվացիա:

- Արցախի հետ կապված՝ առաջիկայում ի՞նչ ծրագրեր կան:

- Հավանաբար տեղյակ եք, որ բացի հանքարդյունաբերությունից, մենք Ստեփանակերտում կառուցել ենք նաեւ ժամանակակից հյուրանոցային համալիր՝ լողավազանով, սպա կենտրոնով եւ այլն: Մենք նաեւ ծառայությունների խոշոր պատվիրատու ենք Արցախի բազմաթիվ ընկերությունների համար: Սակայն մեր գործունեության հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է: Մենք այսօր էլ շարունակում ենք օգտակար հանածոների որոնողական աշխատանքները մեզ համար հետաքրքրություն ներկայացնող տարբեր վայրերում: Հույս ունենք, որ կկարողանանք արդյունաբերական հետաքրքրություն ներկայացնող այլ հանքավայրեր հայտնաբերել, ինչի շահագործումը կստեղծի լրացուցիչ աշխատատեղեր եւ կապահովի կայուն մուտքեր ինչպես Արցախի պետական բյուջե, այնպես էլ մեր ընկերությունում աշխատող արցախցիների ընտանեկան բյուջեներ:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչ տեղ ունի ընկերությունն Արցախի տնտեսության մեջ:

- «Բեյզ Մեթըլս» ընկերությունը Արցախի թիվ 1 հարկատուն է: Խտանյութի արտադրության ծավալների կրկնակի աճի արդյունքում այսօր ֆինանսատնտեսական ցուցանիշներով հանրապետության մնացած ձեռնարկությունները զգալիորեն գիջում են մեր ընկերությանը: Թիվ 1 հարկատուն լինելուց զատ մենք նաեւ թիվ 1 գործատուն ենք: Ինչպես արդեն ասացի, «Վալլեքս Գարդեն» հյուրանոցային համալիրի հետ ավելի քան 1200 աշխատատեղ ենք ապահովում: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում տնտեսության համար արդյունաբերության մեջ ստեղծած մեկ աշխատատեղը, որի մուլտիպլիկացիոն էֆեկտը հավասար է երեք Նոր աշխատատեղի՝ ծառայությունների եւ սպասարկման ոլորտներում: Բացի այդ, մենք մեծածավալ բարեգործական ծրագրեր ենք իրականացնում Արցախում, աջակցում ազատամարտիկներին, կրթական ու մշակութային հաստատություններին, շահառու համայնքներին:

Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Դպրոցականների համար նախատեսված ամառային ծրագրերն Արցախում

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման վերաբերյալ «Ապառաժ»-ի հարցին ի պատասխան՝ ԱՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարարության նախադպրոցական եւ արտադպրոցական բաժնի պետ Աննա Ալվազյանը նշել է, որ այս տարի, նախորդ տարիների հետ համեմատած, նորություն չկա. նույն ծրագրերն են, համարյա նույն քանակությամբ երեխաների մասնակցությամբ: Ծամբարային ծրագրերի մեկնարկն արդեն տրված է: «Արցախում նախարարությունն ունի ռազմամարզական ճամբար՝ «Ասպետ» անունով, որը գտնվում է Այգեստան գյուղի նախկին դպրոցական ճամբարի տարածքում: Ամեն տարի «Ասպետ»-ն ընդունում է 500 բարձր դասարանների տղա աշակերտների եւ բանակի ռեժիմով, օրակարգով զուտ նախագործակցային վարժանքներ են կատարվում: Հաճախ մասնակցում են նաեւ Լիբանանի, Ջավախքի, Սիրիայի մեր հայրենակիցները»,- ավելացրել է Աննա Ալվազյանը:

Երկրորդ ճամբարը Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում է, որտեղ ամեն տարի 70 պատանիներ են հանգստանում: «Սա կոչվում է պատանի բնագետի ճամ-

բար: Ծանոթանում են բնությանը, Արցախի տարածքում գտնվող պատմական հուշարձաններին, նրանց պահպանությանը, դաս-պարապմունքներ են անցկացվում»,- տեղեկացրել է Աննա Ալվազյանն ու հավելել, որ ծրագրվում է Ծմակահողը դարձնել երեխաների հանգստի մշտական ճամբար, կառուցել շենքեր ավելի շատ աշակերտներ ընդգրկելու համար:

Արդեն մի քանի տարի է՝ Ստեփանակերտի 5-րդ եւ 10-րդ դպրոցներում ամառային ճամբարներ են բացվում: Այս տարի եւս կբացվի՝ 200 երեխաների ընդգրկմամբ: Տարբեր կազմակերպությունների կողմից եւս կազմակերպվում են ճամբարներ: Հայ ավետարանչական ընկերակցության կողմից գործող Շուշիի ճամբարում մոտավորապես 1000-1200 երեխա է ամեն տարի հանգստանում:

ՀՀ Դաշնակցության տարբեր երկրների կառույցները Արցախի տարբեր շրջաններում կազմակերպում են բակային ճամբարներ: Երկրորդ տարին է արդեն՝ Հայկի սերունդը Շուշիում սկսուտական ճամբար է բացում՝ մոտավորապես 680 երեխայի մասնակցությամբ:

Այս տարի եւս Հունաստանի Սիրոս կոչվում հանգստանալու հնարավորություն

կունենան 22-23 երեխա:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող ճամբարներին մասնակցությանը, ապա ԱՀ ԿԳՆ աշխատակցի հաղորդմամբ՝ ՀՀ կառավարության հովանավորությամբ Հանքավանի եւ Ծաղկաձորի ճամբարներում Արցախից 200 երեխա է ընդգրկվելու այս տարի: «Մասնակիցները սոցիալական կարգավիճակ ունեցողներն են, զոհված ազատամարտիկների, հաշմանդամություն ունեցողների, բազմազավակ ընտանիքների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ»,- նշել է Աննա Ալվազյանը:

Արդեն երրորդ տարին է, ինչ Երկրպահի կամավորական միությունն Արցախին 800-900 տեղ է հատկացնում Սեւանի ճամբարներում հանգստանալու համար: Մեկնարկը սկսված է. ամեն երկուշաբթի 90 երեխա է մեկնում վերոնշյալ ճամբարներ:

Իսկ Գյումրիի կաթոլիկ եկեղեցու «Հուսաստան» կազմակերպության կողմից հովանավորվող ճամբարում Արցախին 150 երեխայի տեղ է հատկացվել: Տվյալ ճամբարը գործում է հունիսի 29-ից, Ծաղկաձորում:

Ինչ վերաբերում է Արցախի բոլոր երեխաների մասնակցությանը՝ ԱՀ ԿԳՆ նախադպրոցական եւ արտադպրոցական բաժնի պետն այն կապում է համապատասխան պայմանների բացակայության հետ. «Ծամբարներին աշակերտների ընդամենը 7-8%-ն է ընդգրկված լինում: Օրինակ, Ստեփանակերտ քաղաքը համարյա 8000 աշակերտ ունի, որից 500-600 աշակերտ ենք կարողանում ընդգրկել: Ցանկալի կլինի, որ նյութական միջոցները, շենքային պայմանները թույլ տային, որպեսզի բոլոր աշակերտները կարողանային մասնակցել»:

Վերջին 6 տարիների ընթացքում Արցախի տարբեր շրջաններում բակային ճամբարներ են կազմակերպում ՀՀ Դաշնակցության տարբեր կառույցների երիտասարդական թևերը: ՀՀԴ Արցախի երիտասարդական միության Վարիչ մարմնի ներկայացուցիչ Մերուժան Սուլեյմանյանի տեղեկացմամբ՝ այս տարի եւս Արցախում շարունակելու են հասարակության շրջանում մեծ արձագանքի արժանացած բակային ճամբարների կազմակերպումը 10-16 տարեկան, մոտավորապես 1000 պատանիների մասնակցությամբ:

Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ»-ը 100 տարի առաջ եւ այսօր

Մեր պարտքը

Այս պատմական ժամին, երբ յեղափոխական կառավարությունը ժողովրդի անքուն առաջնորդն է հանդիսանում, երբ երկրի ղեկավարները պահանջում են լինել մաքուր յեղափոխական տարրեր, մեզանում կան խաւեր, որոնք ժողովրդական կառավարությունը ուրիշ կերպ են հասկանում:

Եւ տեսնում էք՝ տեղ-տեղ հանդես են գալիս հին կարգերի երկրպագուներ, որոնք այսօր իրենց յեղափոխական են ձեւացնում՝ միմիայն ընտրելու, պաշտօնի տեր դառնալու համար:

Եւ ուզում են հաւատացնել, որ երեկւայ կառավարության ձեռքին մարգարէ մտրակի ու հայհոյանքի մարդը այսօր կարող է յեղափոխության տիպար հան-

դիսանալ...

Ժողովուրդը, աշխատաւոր ժողովուրդը, որի մէջքին շարունակ իջնում էին բռնակալության բռնկումները, պետք է զգուշանայ այդ տիպի մարդկանցից:

Նրանք, որոնք երեկ յեղափոխականներ էին:

Նրանք, որոնք սիրում են հրապարակի տեր դառնալ, զուտ իրենց եսամոլութեան համար:

Նրանք չեն կարող յեղափոխության անկեղծ բարեկամը լինել եւ պատաստել երկրում ազատ կարգեր:

Նրանք խոհեմութիւն պետք է ունենան յետ պահել իրենց անձը ժողովրդավար ձգտումներից եւ նպաստել իրենց լուծութեամբ նոր իրավակարգի զարգացման:

Ազատութիւն է: Հասարակութեան իւրաքանչիւր անդամ, կին թէ մարդ, իրաւունք ունի քննելու, քննադատելու, վերլուծելու մարդկանց եւ տալու իր ազատ քվէն նրան, ով ժողովրդի շահերի ճշմարիտ պաշտպանն է:

Ընտրութեան օրերն են:

Իւրաքանչիւր ազատ քաղաքացի լրջմտութեամբ պետք է գնահատէ ազատութիւնը եւ այնպէս ձեռք առնի իր քվէն:

Ընտրութիւններ են գալիս.- այսօր քաղաքային ինքնավարութեան, վաղը կոմիտեների, միւս օրը սահմանադիր ժողովի են այլն:

Չարհամարհենք ազատութիւնը եւ հին մտրակը տանք յին եսասաւուրի ձեռքը, որ գայ ու մեզ ասի, թէ՛ ցուեցէք, մեծը

գալիս է, եւ չցուելուց մեզ քաղաքական յանցաւոր ճանաչեն ու բանտ առաջնորդեն:

Յոյց տանք, որ քաղաքական հասունութիւն ունենք գնահատելու մեր քվէները եւ տանք այդ քվէները նրանց, որոնք գիտենք, որ կը հանեն մեր փոթորկալից նաւը դէպի խաղաղ նաւահանգիստ եւ կտան մեզ կատարեալ ազատութիւն:

Ահա ինչ է պահանջում վայրկեանը, ահա ինչ է պահանջում այս օրը:


Միտասար

Առաջին 1917 տարի

Կիրակի, 11 յունիսի

N4

Թե ինչ եղավ, երբ Տիգրանիկը Ռուսաստան թռավ



Փոքրիկ գյուղում Տիգրանիկին գիտեին բոլորը: Մի բուռ մարդիկ են, ամոթ էլ չէ՛, որ իրար չճանաչեն: Մի ժամանակ գյուղը մեծ էր, բնակչությունը՝ շատ: Բայց ժամանակի ու բարքերի բերումով փոքրացավ, դարձավ անմխիթար, երիտասարդները չվեցին դէպի տաք ռուսաստաններ: Հիմա դատարկ տների թիվն ավելի շատ է, քան իրենց՝ բնակիչները:

Տիգրանիկը միջակ սովորող էր, հատուկ շնորհքով ու գիտելիքներով չէր փայլում դպրոցում, թեեւ մայրը ծնողական ժողովների ժամանակ անընդհատ բողոքում էր. «Սովորում է, չի սովորում՝ 3-4 եք դնում, բա երեխուն էդպէս կկոտրե՞ն, երեխուն պիտի թեւ տաք...»: Դպրոցում արդեն անգիր գիտեին այդ բողոքը, եւ ծնողական ամեն մի ժողովի գնալուց առաջ դաստեղծ ինքնաբերաբար ծանոթ երգի պէս քթի տակ կրկնում էր այն:

Այդպէս էլ դպրոցում Տիգրանիկին ոչ ոք թեւ չովեց, բայց արի ու տես, որ մի օր նա մեծացավ, ինքն իրեն թեւ առավ ու թռավ Ռուսաստան:

- Գնացել է փող աշխատելու, ուզում է գա հայրական տունը շենացի, հրէ՛ն տանս պատը քանդում է, ո՞վ պիտի դրա հոգսը քաշի: Խեղճ երեխաս Էստեղ կարգին աշխատանք չգտավ, գնաց ընկավ Ռուսաստանի ձորերը, - ախ ու վիշ էր անում մայրը:

- Հը, Տիգրանիկը ո՞նց է, ձեն-ձուն չի հանում, հարմարվե՞ց Ռուսաստանում, որոշ ժամանակ անց հարցրեց հարեւան

Սաթիկը:

- Է՛, Տիգր, ի՞նչ Տիգր, ո՞վ կարող է հիմա Տիգրիսի հետ ոտք չափի: Փողին փող չի ասում, գալուստիկը վզին, ջիպը տակին, տուն-տնամէջն էլ երկու անգամ չես նայի:

- Բո՛, Էդ ի՞նչ գործով է զբաղվում մեր Տիգրանիկը, որ էդպէս Տիգր է դառել:

- Ես ի՞նչ իմանամ, իմ ի՞նչ գործն է, կարելո՞րդ՝ որ ոտքը պնդացրել է արդեն:

- Հա՛, վերջում էլ մի ռուսի կհանդիպի, կմա Էստեղ, քեզ էլ կտանի:

- Չէ մի չէ, խի՞ ես մեռած եմ, որ տղաս ռուս հարս բերի տունս: Իմ հացը խլե՞ք չի դառնա՞ լավ իմացիր:

Այսպէս Տիգրանիկը հաստատվեց Ռուսաստանում: Տաս տարի գյուղի երես չտեսավ: Ձմռան ամիսներին մայրը գնում էր տեսակցության եւ վերադառնում՝ գովեստի պարկը շալակին. «Տիգրիս պէս չկա՝ գալուստիկը վզին, ջիպը տակին...»:

Մի օր հարեւանուհուն ասաց.

- Երկու օրից Տիգրոս գալիս է, հարսիս բերում է ծանոթացնի, ես ամառ շախով-շուխով հարսանիք կանենք:

- Մալադեց տղա, բա աղջիկը ո՞ր կողմերից է:

- Էստեղից է:

- Էստեղի հա՞յ է:

- Բայց դա ի՞նչ կապ ունի՝ հա՞յ է, թե հայ չէ: Ես հո հետամնաց չեմ, որ նման հարցեր տամ. կարելո՞րդ՝ իրար սիրում են:

- Հողեմ գլուխդ, դե կգնաս խլե՞ք ուտես, քթի տակ ասաց հարեւանը:

- Ի՞նչ:

- Ոչ մի բան, ասում եմ՝ երեւի գյուղովի մեծ հարսանիք կանենք:

- Ի՞նչ գյուղ, Ռուսաստանում ենք անելու, Ռուսաստանում:

- Ուզո՞ւմ ես ասել, որ մենք հետամնաց մարդիկ ենք, հա՞:

- Չէ, բայց իմ ռուսի պէս զարգացած չեք: Տիգրիսի հարսանիքին Էնքան գալուստիկով մարդիկ են գալու, որ չեղած: Ամո՞թ չի էդ մարդկանց ասենք, թե գյուղում է Տիգրոս պսակվում:

Երկու օրից Տիգրանիկ-Տիգրոն եկավ գյուղ: Սեւ ջիպով անցավ գյուղամիջով եւ գլխով բարեւեց կանգնած մարդկանց:

- Ես Տիգրանիկը չի՞: Բա խի՞ մեքենայից չիջավ, 10 տարի դաս եմ տվել, - ասաց մաթեմատիկայի ուսուցիչը վիրավորված:

Մայրը տղայի պատվին ծեղկալով հաց էր թխել: Երբ սեղան նստեցին, հյուսիսային հարսնացուն ասաց.

- Турпан, что это?՝

- Эмо... зеленых хлеб, - այսպէս թարգմանեց Տիգրոն, ում համար արդեն ամեն բան կանաչ էր:

- Уф, не хоч, давай нуццы закажем, - հարսը քիթը կնճռոտեց:

Տիգրանիկը քահ-քահ ծիծաղեց:

- Օքեյ, օքեյ, զակաժեմ, - ասաց անգլո-ռուսախոս դարձած Տիգրոն:

Հաջորդ օրը առավոտյան մայրը արդուկեց տղայի կոստյումը, որ հագնի ու իջնի գյուղամեջ:

- Մամ, գալուստիկս չե՞ս կապի, - կոստյումը հագնելով՝ ասաց տղան:

- Վայ, բալա ջան, ես ո՞ր օրվա գալուստիկ կապող եմ, հարսիկդ թող կապի:

- Չի կարողանում, մամ... Հիմա ի՞նչ անեմ, առանց գալուստիկ իջնեմ գյուղամեջ, մարդիկ ի՞նչ կասեն:

- Ամոթ է, ամոթ է: Սպասի, գնամ հարեւան Սերժիկին կանչեմ՝ գա կապի: Գյուղապետարանում է աշխատում, գուցէ իմանա՞ծ ձեռք:

Սերժիկը գլուխն օրորեց ու ասաց, որ կյանքում «էդ գործն արած չկա»:

- Պահոոոո, ուրիշի կանչի, - բողոքեց Տիգրոն:

- Սպասի՝ գնամ Սիրուշին կանչեմ. չորս տղա է մեծացրել, գալուստիկ կապած կլինի:

Եւ, որ Սիրուշը 4 տղա էր մեծացրել, դա ճիշտ էր, բայց, որ գալուստիկ կապել չգիտեր, էդ ավելի ճիշտ էր:

- Բա ի՞նչ անեմ, - նեղսրտվեց մայրը:

- Խի՞ ես սրտնեղվում, - հուսադրեց Սիրուշը, - Առստամյանին խնդրի՛ գա կապի. գյուղապետ մարդ է, ամեն օր գալուստիկով է գործի գնում:

- Վայ, ես քո արեւը կծեմ, ճիշտ ես ասում:

Րոպէ չանցած՝ Առստամյանը ներկայացավ:

Տիգրի գալուստիկի հարցը համարվեց լուծված: Առստամյանն իրենից գոհ-գոհ հարցրեց.

- Տղա ջան, Ռուսաստանում ի՞նչ գործի ես:

- Սեփական բիզնես ունեմ, դաչա, մեքենա, աշխատողներ...

- Հա՛...

- Պարոն Առստամյան, ինչպե՞ս դուրս գամ ձեր լավության տակից: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել գյուղին:

- Ապրես, շատ ապրես, որ էդքան

շնորհք ունես: Դե, գյուղում մեծացած երեխա ես, պիտի գյուղի հոգսերին տեղյակ լինես: Ինչպէս տեսնում ես՝ մանկապարտեզ չունի գյուղը, ակումբի շենքը փլման ենթակա է, մի նորմալ բուժկետ չունենք եւ նման այլ խնդիրներ, որոնց լուծումը ակնկալում է քեզպետների աջակցությունը:

- Ես մի բան կանեմ, անպայման գյուղի համար մի հովանավոր կգտնեմ, հանգիստ կացեք:

- Ապրես, տղա ջան, շատ ապրես:

- Դուք էլ ապրեք, պարոն գյուղապետ, որ դուք չլինեիք, ո՞վ պիտի Տիգրիս գալուստիկը կապեր. երեսներս պարզ արիք, - ժպիտը դեմքին ավելացրեց մայրը:

Առստամյանի հեռանալուց հետո մայրը Տիգրիսի զգուշացրեց:

- Գյուղի մարդկանց շատ գլուխ չդնես: Ականջիդ մեկը խուլ պահիր: Գյուղացի մարդիկ են, ի՞նչ գիտեն, թե ինչ է կատարվում ռուսաստաններում: Դրանք մենակ ուզողություն անել գիտեն:

- Գիտեն, թե փողը մենակ ակումբ-մանկապարտեզ շինելու համար է, - Տիգրոն նայեց հայելու մեջ եւ հիացավ ինքն իր տեսքով:

... Սա Տիգրանիկի առաջին այցն էր հարազատ գյուղ: Ապա այն դարձավ վերջինը: Դրանից հետո գյուղացիք Տիգրի երեսը չտեսան: Երկու տարի հետո մայրն էլ տեղափոխվեց Ռուսաստան: Հիմա հայրական տունը դատարկ է, հարեւան Վալոն է տանը նայում: Մի անգամ հեռախոսով կապվել էր Տիգրի հետ ու հարցրել.

- Բալա ջան, բա հայրական տանդ պատը փլվել է, ի՞նչ անենք. կո՞ւզես մի քիչ փող ուղարկի, մի մարդ վարձեմ՝ շինի, ափսոս է:

- Չէ, դյադ Վալոն, ինչի՞ս են պետք էդ պատերը, տունը քեզ փեշքեշ, կուզես պահի, կուզես՝ քանդի-ծախի, կուզես՝ գոմ շինիր:

- Լավ, Տիգր ջան, դե որ էդպէս է, ուրեմն կով-մով կպահեմ մեջը:

- Ոնց սիրտդ տա, Վալոն դյադ, - Տիգրի ձայնը մարեց հեռախոսում...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

¹ Տիգրան, ի՞նչ է սա

² Դա... կանաչ հաց է

³ Ուֆֆ, չեմ ուզում, արի պիցցա պատվիրենք

⁴ Լավ, Լավ, կպատվիրենք